

Hentchak :

Organe Central  
DU PARTI

HENTCHAKISTE

# Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien

mensuel

XX Année

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ԽՈՐՏԱԿՈՒՄԾ ՔԱՆՂ

Ռուսաստանի աշխատաւոր և գիւղացի դասակարգը, իր անգիտակցութեան օրերի մէջ, այն կարծիքն ունէր, թէ Պետերբուրգում նստող գահակալները խնամածու հայրեր էին, որոնք պատրաստ էին ամէն ցաւի դարման և ամէն վէրքի թեթևութիւն տալ, եթէ իրենք խակապէս գիտցած լինէին, թէ այգալիս երեւոյթներ գոչութիւն ունեն իրենց հոգատարութեանը չանձնուած ժողովրդի մէջ, և զրա համար էլ, իր մով իր շահերի դէմ վարձող այլ անկազմ զանգրուածը, մահակներով և կացիներով խիստ հալածանք հանեց այն մի բուն հոյակապ մարդոց դէմ, որոնք իրենց կարծիքի ճիշդ հակառակն էին քարոզում, այն է՝ թէ երկրի ամբողջ թշուառութեան, յետամնացութեան, աւերմունքի պատճառը և պատասխանատուն Պետերբուրգի մէջ բազմող մարդակուշներն էին և նրանց զրած կարգ ու կանոնը:

Ոչ միայն Ռուսաստանի ժողովրդի անգիտակից մասը, այլ նրա ինտելիգենտ կարծուած տարրերից շատ շատերն իսկ այն համոզումն էին սերմանում, թէ ժողովուրդը ինքը արժանի էր քաղաքական և անտեսական այն վիճակին, որի մէջ որ գտնուում էր, ու եթէ նա փոխուէր, վարզանար, յառաջադիմէր՝ ընդունակ տարր դառնար, այն ժամանակ Յարերը իրենք կլինէին առաջինը, որ նրան կօծտէին այն բոլոր իրաւունքներով, ինչոր պէտք է ազատ ապրել ուղղմի ժողովրդի համար:

Կեանքը պատկերացնողները, իրականութիւնը բացատրողները իրենք գտնուում էին պատրանքների մէջ:

Ու այնուհաստիքի Ռուսիան, նրա իշխող դասակարգերը, Քահի չորս կողմը ամբապնդուած իրենց ապահով էին զգում ամէն այն ցնցումներից, որոնք կատարուել էին ուրիշ երկրներում:

Ոչ ցարիզմի պաշտպաններն էին ուրիշ նիւթից և ատաղձից կազմուած, և ոչ էլ նրանց լծի տակ հեծողները, նրանց շահագործութեան առարկայ և փողները: Պատմական էջը պիտի բացուէր՝ ամէն ինչ իր սեպհական փոքրով հասկանալի լինելու համար:

Ու այդ էջը բացուեց՝ կարծուածից աւելի արագ:

Կապիտալիզմը պատմական մի փուլ է, որից

պիտի անցնէին բոլոր երկրները: Ռուսիան բնական օրէնքներից չէր կարող դուրս գալ: Իրերի ընթացքը նրան զարգացման այդ շաղի մէջ դրեց, ու բացի դրանից՝ ցարիզմի պաշտպանները—իրենց պետական մեքենան ժամանակի հետ յառաջ գործելու, տիրողի շահերը ապահովող այդ գործիքը պատշաճ զրութեան մէջ և բարձրութեան վրայ պահելու համար—իրենց կողմից ոչ մի տուեցին կապիտալիզմի փթթումին, չէ՞ որ իրենց զրամ էր պէտք դիպուած պահանջներին բաւականութիւն տալու, իսկ կապիտալիզմի ազդակները այդ զրամը առատութեամբ թափում էին, ուստի մնում էր նրանց հովանաւորել, շահագործութեան լայն տարածք տալ: Այդպէս էլ եղաւ:

Կապիտալիզմի տարածումը Ռուսաստանի մէջ, համեմատաբար, աւելի արագընթաց եղաւ: Ու այն տեղ էլ ստեղծուեց նորագոյն կեանքի շարժիչ տարրը՝ պրոլետարիատը,—մարդկութիւնը վերածնող, մարդկութիւնը դէպի մարդկութիւն տանող և իր խակական նպատակին ծառայեցնող այդ դասակարգը:

Պրոլետարիատ դասակարգ, պրոլետարական պահանջներ և ցարիզմ, ցարական բէթիմ,—զրանք երկու անվերածելի էութիւններ են, որոնք չեն կարող երկրի միւսնոյն տարածութեան մէջ ամփոփուիլ, միատեղ բացել, միասին ապրել,—այդ երկուսից մէկը միւսին պիտի ոչնչացնի, մին միւսին տեղի պիտի տայ: Ու սկսուեցաւ կռիւը:

Երկու միահեծանութիւններ իրարու դէմ էին ճակատած, մին մարմնացող Հին Ռուսիայի, որի մէջ իշխում էին անտրդարութիւն, բռնութիւն, շահագործութիւն, սով, սրածութիւն, անվերջ տառապանք. իսկ միւսը՝ պատկերացնող Նոր Ռուսիայի, որ բերում էր ճշմարտութեան, արգարութեան լոյսը, որ անհատին, հաւաքական մարմիններին շղթայակերծ էր անում անտեսական և քաղաքական ամէն կաշկանջումներից, ու նրանց դերապանցօրէն մարդ, մարդկային բարձր նպատակներին ծառայելու պատրաստում:—Ու կռիւը եղաւ տաք, արիւնազանգ, անխնայ, երկու կողմից էլ: Յարիզմը յենուեցաւ իր բոլոր Հին ոյժերի վրան, երևան դրեց իր օրինազիրքը, իր վնասները բազուկները, իր պաշտպանների ուղեղը,—Պրոլետարիատը անցաւ արեան լճակներից, յետո չընկրկեց և իր իրաւունքի պատմեշի վրան կանգնեց:

Յարիզմը հարկադրուեց տեղի տալ: Բայց այդ

դիրքը յետ դառնալ աւելի լաւ թուչելու Հոգեբանութիւնն էր: Նա վճռական բոպէին տեղի տուեց, որ պէսզի իր ուժերը կազդուրի, կազմակերպի և նորից ասպարէզ մտնի՝ իր կուրը շարունակելու համար: Մի՞թէ միւսնոցնը չէին արել իր նմանները ուրիշ երկրների մէջ՝ համանման պարագաներում:

Եկաւ Առաջին Դուռնան, — զա Պրոլետարիատի ծանակի չաղթանակի մի բեկորն էր:

Յարիզը իր պաշտպանների բերանով, իր ծառայութեանը եղող սուխներէ խուրձերով՝ ամէն հնարիմացութիւն թափեց այդ նոր հաստատութիւնը բացառապէս իր նպատակներին ծառայեցնելու: — Պրոլետարիատը նրա դիմակը պատուեց, աստուղը երևան դրեց, թոյլ չտուեց որ պատմական չարագործը շարունակի մարդկային անգիտակցութիւնը շահագործել:

Իրաւունքը ուժեղինն է. աւելի պարզն ասած՝ անում եմ ուզածս, որովհետև ուժեղ եմ, որովհետև այդպէս է թելադրում շահս:

Արձակուեց Առաջին Դուռնան, նրան հետևեցին Բարձրագոյն Սենատի ծառայական բացատրութիւնները:

Յոյս կար Երկրորդ Դուռնայովը հասնել այն նըպատակին, որին անկարելի եղաւ հասնել Առաջինովը:

Դուռնայուեց Երկրորդ Դուռնան էր: Պրոլետարական իրաւունքների կրճատում, պաշարողական դրութիւն, պատժող արշաւախմբեր, լեռնա-դաշտային դատարաններ, կախաղան, աքսոր, ամէն տեսակի անարգար դատապարտութիւն, քմահաճոյքի ստեղծող ամէն հրնարագիտութիւն իզո՛ւր էին անցել, բոլորը իզուր:

Երկրորդ Դուռնան աւելի ըմբոստ եղաւ, քան առաջինը՝ յանձին պրոլետարական ներկայացուցիչների:

Ճշմարիտ ուսու մարդիկների, հոկտեմբերեանների, միապետականների՝ ցարիզմի այդ աջ թևի օգնութիւնը պարապ անցաւ, որքան էլ որ ընդհանուր յարձակման ժամանակ բուրժուազականութիւնը, կադէտականութիւնը, ժամանակակից կեղծաւորութեան և յանտուութեան այդ մարմնացումը, երկդիմի դիրք բռնեց: Ո՛չ, սխալ է այդ, նա միայն երկդիմի դիրք չբռնեց, այլ յաճախ, պարզ կերպով, ցարիզմի կողմը բռնեց և ժողովրդական ապստամբեան անունով խօսողը չէ թէ միայն նպատուեց, այլ աշխատեց այդ ժողովրդի ապստամբութիւնը խեղդել, նրա բացուելուն արգելք լինել:

Ռուսական ընդհանուր բուրժուազիան, իր բերան կուսակցութեամբ, եղաւ աւելի գողջ, աւելի արհամարհելի, քան ուրիշ որ և է մի այլ երկրի մէջ գործող բուրժուազիա: Մինչդեռ ուրիշ երկրների բուրժուազիան եղաւ, որ խորտակեց ազնուա-Ֆէոդալական կազմը, իր կաշին խաղի մէջ դնելով, Ռուսաստանի բուրժուազիան ո՛չ միայն այդ քաջութիւնը չունեցաւ, այլ չունեցաւ տղամարդութիւն աջակցելու նոցն իսկ նրանց, որոնք պատմական այդ միասին իրենց վրան էին առել: Երկրորդ Դուռնայի մէջ կադէտականութիւնը իր դատապարտութեան վճիռը տուեց:

Ո՛րն էր այն նորածին ոչժը, որ Երկրորդ ան-

գամ վիշրեց ցարիզմի երազը, — պրոլետարիատը, սոցիալիստական իրականութեան ժայռը:

Լուծուեց Երկրորդ Դուռնան էլ:

Այժմս երբ ցարիզմի ամենախելքները հեռաւոր բանտերի և աքսորավայրերի մէջն են թաղուած, երբ ամենալաւ կուրուղ ոչժերից շատերը չէրոքացուած են, ցարիզմը մի Երրորդ Դուռնայով ուզում է խաղալ իր շահագործութեան առարկայ եղող ժողովրդի և նրա յառաջողեմ գնդի հետ:

Կարուցուեն ցեղական խնդիրներ, կպուլի ուսուացման քաղաքականութիւնը, նուաճուող ժողովուրդները իրաւաթափ կլինեն, ազնուականներ, աւատապետներ, կղերականներ, չալիշտակիչ սեպհականատէրեր՝ սրանք բոլորը ստուար թուով ներկայ կլինեն և այս անգամ ամէն ինչ կարգի կմտնի, որովհետև Յանոս կադէտականութիւնից առնականութիւն չի յուսացուիլ, իսկ Պրոլետարիատը ջախջախուած է...՛

Ու ցարականները նորից գտնուած են պատրանքի մէջ, և այդ պատրանքը ո՛րքան անուշ է թուած նրանց:

Սակայն չի անցնիլ շատ ժամանակ և Պրոլետարիատը, իր ժամանակին, նորից ցոյց կտայ, թէ այդ կարծեցեալ անուշութեան մէջ դառնութեան ի՛նչ միկրոքներ կան, որի ձեռքից ցարիզմը չի կարող ազատուիլ, ինչ լարախաղացութիւնների մէջ էլ որ մտնելու լինի:

Պիտի գումարուի Երրորդ Դուռնան՝ բարձրագոյն կամքի նշանակածին համեմատ:

Որքան էլ Պրոլետարիատը անդարմանելի կորուստների ենթարկուած լինէր այս մի քանի տարւայ ընթացքում, որքան էլ որ իր մարտիկները կարգերը անօտարայած և իր շատ հարազատներից զրկուած, այնուամենայնիւ նա, որպէս բոպէի գերագանցօրէն Պաշարող Ոչժը, պիտի ներկայանայ այդ ժողովին էլ: Երես շուռ տարու, բոյլօտի ենթարկելու և գոյութիւն ունեցող քաղաքական հաստատութիւնները չտեսի դարկելու գողափարը սոցիալիստական սկզբունքների ռահահորդինը չէ: Նա պիտի լինի այն ամէն տեղ, ուր կարող է իր հակաուսիրդների հետ ճակատի գարու:

Ու Դուռնա մտնելով, այս անգամ էլ Սոցիալ-Դեմօկրատիան, իր ներկայացուցիչների բերանով, պիտի գայ հաստատելու:

Թէ ոչ՛ միայն ներկայ Դուռնան, այլ ցարիզմի ուղեղից դուրս եկած քաղաքական բոլոր հաստատութիւնները արժատապէս խաբուսիկ են և տրամադծօրէն անհաշտ ժողովրդական միահեծանութեան հետ:

Թէ անողոք կուրը ցարիզմի դեմ անդուլ ջանքերով պիտի շարունակել, մինչև որ քառանդամ բանաձևով Հիմնադիր Ժողովը չգումարուի, որը միայն, որպէս ժողովրդական միահեծան բերան, կարող է օրինական հող և հաստատութիւններ ստեղծել Ռուսաստանի մէջ, — իսկ մինչ այդ՝ քաղաքական, ընկերային, տնտեսական ամէն հաստատութիւն բռնադատութեան ուրեմն և ապօրինութեան արդիւնք նկատել: Մի ժողո-

վորդ իրաւունք ունի հնազանդել, անսալ միայն իր ազատ կամքով, իր քուէով, իր որոշումներով տըւած օրէնքներին:

Սօցիալ-Դեմօկրատիայի առաքելները Դուժապիտի երթման նորից հաստատելու, թէ դասակարգային հետեանք ունեցող ներկայ քաղաքական հաստատութիւնների բերած բարեկարգութիւնները միայն այնքան նշանակութիւն ունեն Պրոլետարիատի համար, որքան որ նրանք կարող են ծառայել սօցիալիստական պըրօպագանդայի և գործունէութեան ծաւալմանը:

Թէ բուրժուազական, արմատական որ և է ծրագիր, բաւականութիւն չի կարող տալ պրոլետարիատի քաղաքական ու սնտեսական պահանջին, ուստի ամէն ծրագիր դէմ պիտի հանել սօցիալիստական ծրագիրը, սօցիալիստական իրականութիւնը:

Պրոլետարիատը այս երրորդ անգամն էլ արեւնկզակ թշնամիներէ առաջը պիտի ներկայանայ և նրանց ցոյց տայ, որ ինքը կայ, և պատմական միասիա ունի կատարելիք, մի միասիա՝ որի ընթացքը չի կարող կասեցնել ո՛չ միապետական յետադիմականների կռնչիւնը, ո՛չ բուրժուաների երկղիմութիւնը և ո՛չ էլ Ռոմանովներէ արդի Խորատկուած Գահը:

**ԵՒՐՈՊԱ, ԹԻՒՐԿԻԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ**

Եւրօթեանց մէջ պետութիւնն ատուած ծարմիրն ոչ այլ ինչ է, եթէ ոչ տիրապետող դասակարգի կազմակերպուած ոյժը, որ նպատակ ունի նրա շահերը պաշտպանել, յարստե կարճել թէ ներքին և թէ արտաքին վտանգներից:

Գատակարգային շահերը մնայուն դարձնելու գործը արտայայտուած է ներքին և արտաքին քաղաքականութեան մէջ Ուրեմն մի պետութեան քաղաքականութիւն, ըստ էութեան, ունի իր որոշ նպատակը: Ամէն քաղաքականութեան անկիւնաքարը այդ երկրի յարստե իրողութիւնների մէջ պիտի վնասուել, այդպիսով է միայն, որ կարելի է թափանցել քաղաքագետների ոլորապտօյտ ճանապարհները և ձուտար գաղափար կազմել նրանց արտքերի ու դիտաւորութիւնների մասին:

Եւրօպական պետութիւնների քաղաքականութիւնը նոր չէ գծուած դէպի Թիւրքիան, երկար ժամանակներից ի վեր է, որ մեծ պետութիւններից իւրօքանչիւրը իր որոշ քաղաքական նպատակներն ունի, նպատակներ՝ որոնք միաժամանակ և՛ միջոցներ են եղած՝ այդ պետութիւնների մնայուն շահերի տեսակէտից:

Եւ մեր թէզն է՝ որ այժմ հրապարակի վրայ չկայ որ և է մի պետութիւն, որ բացարձակ քաղաքականութիւն ունեցած լինէր Թիւրքիան ամբողջով և նրան վերջնական անկուծից ազատել:

Մեր միւս թէզն է, որ սխալ, զլխովին սխալ է այն ենթադրութիւնը՝ թէ եւրօպական պետութեանց շահերը այնպէս են դասաւորուել, որ Հայկական Խնդրի համար երբ և է միջամտութիւն չի կարող լինել: Մենք յաճախ տեսլ և ասուծ ենք, որ այդ միջամտութիւնը կարող է լինել, և կլինի, եթէ Հայկական Յեղափոխութիւնը միջամտութիւն չառաջ բերող զօրաւոր պատճառները ստեղծի. մինչև որ այդ հարկեցուցիչ

պատճառները չստեղծուեն, — արտաքին միջամտութեան վրայ յոյս դնելը ցնորք է:

Պարզեք խնդիրները: Բերլինի դաշնադրութիւնը պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները աւելի խճճեց քան պարզեց և, որ զլխաւորն է, նոր համախմբումների առիթ ու հող ստեղծեց:

Արևելեան խնդիրը եւրօպական ուրիշ խնդիրների հետ ոչ միայն սերտ կապ ունի, այլ նրանց մի երեսն է կազմուծ: Նրա պատճառով, այսպէս ասած, Եւրօպան Արևելք է փոխադրուած, ուստի մին չի կարելի կղզիացնել և ուտումնասիրել առանց միւսների:

Եւ ինչ եղաւ Բերլինի դաշնադրութեան անմիջական հետեանքը:

Նախ կազմուեց Եւրօպետական և ապա Երկպետեան Դաշնակցութիւնը:

Գերմանիան, Աւստրո-Հունգարիան և ապա Իտալիան դաշնակցելով՝ նրանք, պարզ բան է, համաձայնութեան եւ կած պիտի լինէին և՛ Արևելեան Խնդրի նկատմամբ: Եւ ինչ պիտի լինէր նրանց քաղաքականութիւնը առանձին առանձին կամ միասին վեր առած, — այն՝ որ կա՛մ Թիւրքիան պահել, նրան աւելի յարմար պարագային կլանելու, և կամ նպատակը նրա քայքայուելուն, աւելի մեծ պատաններ կորզելու դիտաւորութեամբ: Նոյն այդ քաղաքականութիւնն էին ունեցել դարերից ի վեր և՛ միւս պետութիւնները:

Պատմական հարցն այսպէս դրուած լինելով՝ բնականաբար կազմուող ամէն խմբակցութիւն առաջին գործը պիտի անէր իր հեռաւոր և մերձաւոր նպատակների իրագործմանը հետապնդել:

Այդպէս էլ եղաւ:

Թիւրքիայի աշխարհազարական դիրքը, նրա ոչ-արհամարհելի ֆիզիքական ոյժը անգոյնութեան ճառնել չէր կարելի, և ահա՛ իրենց գործունէութեան առաջին շրջանին մէջ թէ Եւրօպետական և թէ Երկպետեան Դաշնակցութիւնը ո՛չ մի միջոց չլնայեցին նրան իրենց կողմը դրաւելու: Այդ նկատմամբ առանձին յամառ ձգտուծ ցոյց տըւեց Եւրօպետական Դաշնակցութիւնը ընդհանրապէս, նրա մէջ գերակշիռ դեր խաղացող Գերմանիան ճանաւորապէս: Քանի որ այդ ժամանակները խնդիրները այնպէս էին դասաւորուած, որ մեծ պատուը ունենալու յուսով անմիջապէս չէր կարելի ձուտնալ «Հիւանդ»ին, ուստի առնել նրան իրենց մէջ, պահել միւսների տենչանքներից, մինչև աւելի բարեյաջող պայմանների յաւաքանալը: Եւ Մեծ Պետութիւնները, երկու խմբակցութիւնների բաժանուած, աշխատեցին՝ Հէնց այդ նպատակով էլ, Թիւրքիային իրենց կողմը քաշել, դիւանադիտական ամէն մեծարանքներ և լաւ ապագայի յոյսեր նրան շուայելով:

Պետութիւնների այդ ձգտուծը անմասն չէր թուրք պետական անձնաւորութիւններին, երեք հարիւր տարուց աւելի է, որ նրանք զխոն դրանց արժէքը, նպատակը և այդ բոլորի հետ վարուելու ձևը: Ու թուրքը՝ Մեծ Թուրքը, ճուա իր պատմական դերի մէջ: Ո՛ր խմբակցութեան մէջ որ ճանէր՝ նախ նրա կամախառար ճառան պիտի դաւնար և վերջն էլ նրա կերակուրը, թող որ հակառակորդ խմբակցութեան շանթերի էլ անմիջական առարկան պիտի լինէր, ուստի նրա քաղաքականութիւնն եղաւ ճանաւածապատ ճանապարհներով ընթանալ (louvoyer), — երկու խմբին էլ բարեկամ ձևանալ, երկուսին էլ ժպտիլ, երկուսին էլ զիջումներ անել, և երկուսի հակաձայնութիւններից օգտուելով՝ նրանց իրարու դէմ հանել ու հակաշահութեանց միջոց լողալով՝ իր գոյութիւնը քաշքշել: Թիւրքիան այդ քաղաքականութեան մէջ քաջափարձ էր, նա իր գործը առաջ տարաւ վարպետ կերպով, առանց իրեն բերան տալու:

Իրերի այդ դրութիւնը երկու որոշ հետեանք ունեցաւ,

մին՝ որ Թիւրքիան, համեմատաբար, ազատ ձեռք  
ունեցաւ իր ներքին քաղաքականութեան մէջ և ճիւղը այն՝  
որ արտաքին ճիշմամտութիւնը զօրեղ չէր, քանի որ  
ընդհանուր համաձայնութիւն չկար ամէն անգամ բոլոր խնդիրներ  
նկատածք և իրեն դէմ կանգնած էին, յաճախ,  
աւելի հակառակներ, քան համառակներ:

Բերլինի դաշնագրութիւնից մինչև ցարդ երկու անգամ  
պետութիւնները միջամտել են Հայկական Խնդրի առթիւ  
մին Ստոնոլի 1894-ի կուռից և ճիւղը Զէյթունի ապստամբ-  
ութիւնից յետոյ: Եւ եթէ այդ ճիշմամտութեանց ընդհանուր  
արդիւնքը եղաւ Զէյթունի պայծառագիւրը և Մայիսեան Ծրու-  
գիրը, և ո՛չ աւելին, — դրա առաջին պատճառը պիտի որսնել,  
այդ շրջանում, եւրոպական խնդիրները զատուորութեան  
մէջ, ինչպէս և՛ նրա, որ հակառակորդ խմբերը իրարու ջա-  
տում էին, և ճիւղը այն՝ որ Հայկական Յեղափոխու-  
թիւնը չէրաւ պահանջուած չափ ու ժեղ և  
յարատեւ:

Եւ դրանից պէտք է յուսահատուիլ, — երբեք: Ըներ  
անդրոտելի համոզումն է, որ հետզհետեւ աւելի բարեջանող  
պայմաններ են ստեղծուած ճեր Գառի համար, և Հայկական  
Խնդիրը ոչ ճիւղն իր կենսականութիւնը չէ կորցրած, այլ  
նա իր լուծմանը մէջ պիտի ծանի՝ այսպէս թէ այնպէս, բայց  
անպատճառ պիտի ծանի: Եւ եթէ ճերը այդ համոզումը  
ունինք, դա ո՛չ ենթակայական է, և ո՛չ էլ զղացմունքի կամ  
բողոքական ոգևորութեան արդիւնք, այլ աւարկայական  
և հիմնուած իրերի այն բնաւորութեան վրայ, որ արդէն  
առեղ են եւրոպական ընդհանուր խնդիրները:

Առնենք զլիսաւոր պետութիւնները առանձին առանձին:

**Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա**

Գերմանիան Թիւրքիայի պաշտպանը և նրա հովանաւոր  
ողն է, — այս է կարճ և սովորական պատասխանը նրանց,  
որոնք այդտեղից եղրակայնելու այն միտումն ունին թէ, ուրեմն,  
ճերը՝ հայերս ոչինչ չենք կարող անել, քանի որ այսպիսի  
ճի հակառակորդ ունինք ճեր առաջը:

Վերլուծենք այդ նորախօսութիւնը:

Որ Գերմանիան Թիւրքիայի տիրութեամբ պաշտպանն  
է, — դրա ճանին խօսք չի կարող լինել, դա ուղիւ է. բայց  
ի՛նչ մտքով, ինչո՞ւ համար, մինչև ո՞ր աստիճան և ի՛նչ  
պայմաններով, — ահա խնդրի հետաքրքիր կողմը:

Պատասխանի համար ճի փոքր յետ երթանք:

Կար ճի ժամանակ, երբ Գերմանիան Արևելեան քաղա-  
քականութիւն չունէր, այդ այն ժամանակն էր, երբ Միացեալ  
Գերմանիա դեռ չկար. այդ այն օրերն էին, երբ  
Շիլլերը ասում էր թէ Անգլիան արդէն ծովերն է տիրել,  
Փրանսիան՝ ցամաքը, Գերմանիային էլ մնում է փիլիսոփա-  
յութիւնը և երաժշտութիւնը: Այդ այն ատեններն էին, երբ  
գերման շատ փիլիսոփաներ, սկսած Հերդերից, իրենց համար  
ածօթ էին համարում հանրամարդկային գործերը թողած՝  
գերմանական նեղ շրջանակի խնդիրներովը պարապելու:

— Ինչո՞ւ համար սեղանս այսպէս տակն ու վրայ է ե-  
ղել, այս ի՛նչ ապակիի կտորներ են թղթերիս վրայ լցուած,  
հարցրեց բորբոքուած Հեդերը՝ իր աշխատանոցի բարեյարա-  
բութեանը հսկող աղանուռը:

— Ճեր իմ, ճի քիչ հեռու, այնտեղ՝ բլուրի վրան Պը-  
բուսայինները և Փրանսիացիները կուռն են. նետուած ուռմբի  
կտորն է եղել այս բոլոր տակնուվրայութեան պատճառը,  
պատասխանեց շփոթուած աղանուռը:

— Ես այսպիսի բան չեմ հասկանալ, դա ինձ չի վե-  
րաբերուած, այնպէս կարգադրի՛ր որ ինձ այլևս չը խան-  
դարեն, ասաց վճռողաբար Հեդերը: Եւ դա տեղի էր ունեցել  
ենայի յիշատակալից կուռի օրը, երբ ամբողջ Գերմանիան

երեսն ի վեր գետին պառկեց: Անշուշտ նապօլէօնի կրունկի  
տակը թփշտացող Գերմանիան առ առաւելն ճիւղն իր ճա-  
սին կարող էր մտածել, արտաքինը նրա համար այն ժա-  
մանակ գոյութիւն չունէր:

Անցան այդ օրերը: 1848-ի Գերմանիան, Փրանսիայի  
Պարլամենտով, ո՛չ ճիւղն Գերմանական Միութեան և Մեծ  
Գերմանիայի ուրուագիծը տուեց, այլև ճանաչելից նրա ար-  
տաքին քաղաքականութիւնը, նրա յարաբերութեան ուղղու-  
թիւնը դէպի պետութիւնները և ազգերը: Մեծ Գերմա-  
նիա ունենալու համար՝ հարկաւոր էր տիրել Արևելականին  
և այնտեղից իջնել Միջերկրական, ու այդ պէտք է լինէր այդ  
ճանապարհի վրայ եղած պետութիւնների քայքայուելու և  
նրանց տիրապետութեամբն իսկ:

Այդ օրից Գերմանիան ունեցաւ իր Արևելեան քաղաքա-  
կանութիւնը:

Եւրոպական քաղաքականութեան մէջ այժմս Գերմանիան  
ներկայանում է պահանջաւոր ուղակի անութիւնը, այդ է  
պահանջում իր շահը: Պահպանողականութիւն եւրոպայում՝  
որպէսզի Արևա-Արեւելքը մարտել կարողանայ, իր համաշխար-  
հային քաղաքականութեանը հաստատուն կուռաններ ստեղծի  
և ճովային ոյժը դարգայնի: Փրանսիան, Անգլիան աշխարհի ա-  
մենալաւ ճանքը իւրացրել են. Աֆրիկայի մէջ իր ունեցածը ո՛չ  
ճիւղն քիչ է, այլև իրարու հետ անընդհատութիւն չկազմող  
երկիրներ: «Փիլիսոփայութիւնը», «Երաժշտութիւնը» չէ այժմս, որ  
իր դբարձման առաջին առարկան է դարձել, այլ ճարտա-  
բարբոթութիւնը: Կապիտալիստական ճարտարագործութիւնը  
իր հետ բերում է յաւելածներում, յաւելածներում անհը-  
րաժեշտ է դարձնում շուկայ, և գերմանական շուկաներից  
մէկն է միտլլեմանական աշխարհը ընդհանրապէս, Թիւրք-  
քիան՝ ճանաւորապէս: Միլլիանական պետութիւնները,  
որպէս յետմնաց երկիրներ, ընդհանուր և անմիջական տեն-  
չանքի առանձին առարկայ են. նպատակ, աջակցել այդ  
երկրների ժամանակաւոր գոյութեանը, որպէսզի շուկան չփակուի,  
ձեռքից չհրթայ՝ ուրիշների ձեռքն անցնելով. ուրեմն պահպանել,  
բաց պահպանել շահագործելու, իր պետական պա-  
հանջներին ենթարկելու պայմանով: Գերմանիան չի ու-  
զում Թիւրքիան, Մարոկկօն . . . պահպանել ինքն ըստ  
ինքեան, այլ պահպանել իր անմիջական և հեռուոր նպա-  
տակներին ճառագեցնելու համար, թոյլ չտալու որ մի-  
նակ ուրիշների բաժինը դառնայ, այլ որ ինքն էլ իր ճանն  
ունենայ, և որքան կարելի է մեծ ճապր: Արևելքում Գեր-  
մանիան պահպանողական քաղաքականութիւն ունի, բայց  
մի՞թէ այդ քաղաքականութիւնը չեն ունեցել շատ առաջ՝  
Փրանսիան, Անգլիան, Աւստրիան, Ռուսիան: Սրանցից ո՞րը  
չի աշխատել նպատակ, աջակցել, որ Թիւրքիան գոյութիւն  
ունենայ, և այդ նոյն իսկ դէպքի ուժով, բայց ինչո՞ւ հա-  
մար, — որպէսզի յարձարագոյն ժամանակը գայ աւելի լաւ  
պատաններ փրցնելու և թոյլ չտալու որ անմիջական գործի  
ձեռքն անցնի: Թիւրքիայի պահպանութեան քաղաքականու-  
թիւնը յառաջանում է բաժանել չկարողանալու համաձայ-  
նութիւնից: Բայց այդ քաղաքականութիւնը արդէլք չի եղել  
որ պահպանել ուրող պետութիւններից իւրաքանչիւրը պատ-  
շաճ պարագային իրեն համար պատաններ չփրցնէր — Սև  
Մովի ափեր, Ռուսա-Հայաստան, Ալժիրիա, Թունիս, Եգիպտոս,  
Կիպրոս, Բոսնիա-Հերցեգովինա՝ դրան վկայ: Գերմանիան պահ-  
պանում, հովանաւորում է Թիւրքիան, բայց չճոռանանք, որ այն-  
տեղ է թափում իր կապիտալը, իսկ կապիտալը ճեր օրերում խա-  
ղաղ աշխարհակայն է, նախախորապետը զինու նուաճման:  
Գերմանիան պահում է Թիւրքիան, բայց այդ պահած ժամա-  
կին նա տիրապետում է, խաղաղ կերպով, Պօլսից մինչև  
Բաղրատ, Միջագետք, Փոքր Ասիա, Սիւրիա: Սա պահ-

պանդոգականութիւն է՝. բայց այդ պահպանողականութեան վերջը ո՛ր պիտի ամառի, դէպի թիւրքիայի ամրապնդումը, դէպի նրա վերականգնումը, թէ՞ դէպի նրա անգամատուճը՝ Գերմանիան բաժանուէր չէր թիւրքիայի երէկ, այսօր բաժնետէր է, և ուզում է պահել, որպէսզի իր բաժինը ի հարկին, այսինքն բաժանման պարագային, աւելի շատ, աւելի մեծ լինի: Եթէ այսօր Գերմանիան սո՛վ տայ անմիջական բաժանման ինդիկն պարզ է, որ իր բաժինը կամ սչինչ կամ շատ քիչ պիտի լինի, ուստի առ այժմ յետաձգել, մինչև կապիտալի հրաշագործ աճումը, զարգացումը, թուաներ և ճուտեր արձակելը:

Հարց, այդ քաղաքականութեան մէջ կայ թիւրքիայի փրկութեան և միջամտութեան անվերաճելի հակառակութեան ինդիկը, — երբէք:

Գերմանիան պաշտպանում է թուրք կայսրութեան պետական ամբողջութեան և սուլթանի ճիւղհեծանութեան գաղափարը, անշուշտ այդ այդպէս է, այսինքն այդ այդպէս երևում է: Իսկ չհարց, է՛ն ո՛ր պետութիւնն է, որ թուրք պետական ամբողջութեան գաղափարը իրենը չի արել, կո՞յ մի պետութիւն, որ իրեն նախանձակնորդ ցոյց չի տուել սուլթանական իրաւունքներին: Բոլորն էլ այդ քաղաքականութիւնն ունեցել են, և ունին, տարբերութիւնն այն է, որ Գերմանիան երէկ ստպարեզի վրայ չկար, ուրեմն այդ քաղաքականութիւնը չունէր, իսկ այսօր այդ քաղաքականութիւնը երևան է դնում որովհետև ստպարեզի վրայ կայ և ինքն էլ ուզում է իր բաժինն ունենալ՝ իր սասանքին համաձայն. մինչև պահպանողականութեան և ամբողջականութեան խօսքերը չլինեն քայքայման, տիրապետութեան և բաժանման քաղաքականութիւնը չի գործիլ:

Եզրակացութիւն, — Գերմանիան պահպանողական տարր է ընդհանուր եւրոպական քաղաքականութեան մէջ, նա պահպանողական է և՛ թիւրքիայում: Արեւելեան խնդրում իր շահերն առաջ տանելու համար՝ նա յենուած է միւսլիման տարրերի վրա: Նա պաշտպանում է թիւրքիայի ամբողջութեան գաղափարը, սուլթանական իրաւունքների կողմնակիցն է, բայց այդ բոլորը այն չափով, որքան որ այդ թուրքն տալիս իր եւրոպական գործերը, եւրոպական շահերը: Արեւելեան այդ քաղաքականութիւնն ունենալով՝ Գերմանիան մինչև ցարդ դուրս չի եկել եւրոպական կոնցերտից, այսինքն միջամտութեան պարագային, միւսները զատուելով՝ (Գրեատ, Մակեդոնիա) իր ոչժը չի գրել թիւրքիայի թիկունքին: Գերմանիայի այսօրուան այդ քաղաքականութիւնը յառաջանում է նախ նրանից, որ ինքը դեռ պէտք եղածին պէս չի զետեղուել թիւրքիայի մէջ, դեռ իր անհնչացած բաժինները լիովին ձեռք չի բերել. դահեռանք է, երկրորդ գերմանական թուլութեան, այդ նրա թուլութեան: Գերմանիան ճովային բաւականաչափ ոչժ չունի՝ իր կամքը թելադրելու, մինչդեռ առաջը կանգնած են ճովային հսկայ ուժեր:

Եւ այդ պայմանների տակ պահելուց, այսինքն խաղաղ տիրապետելուց, բայց օգուտից իրեն և՛ ո՛չ մի վնաս կայ առայժմ:

Հարցը բոլորովին կը փոխուի, երբ Գերմանիան իր խաղաղ նուաճումները զարգացման բարձր կէտին կհասցնի և իր ճովային ոչժը կբացնի: Այդ ժամանակ նրա էլ քաղաքականութեան անմիջական գործը կլինի այն, ինչոր եղած է Անգլիայունը, Ռուսիան, Ֆրանսիացունը, այն է՝ արտառներ փրցնել: Եւ այդ բոլորի մէջ աչքի առաջ պիտի ունենալ միշտ այն՝ որ թիւրքիայի իր շահերի համար Գերմանիան երբէք դուրս չի գալ եւրոպական կոնցերտից, ո՛չ էլ սուր կքաշի՝ եթէ ուրիշ բազկացութիւնների կողմից միջամտութիւն լինի: Մայիս 11-ի ճրագրի իրադրմանը եթէ երեք պետութիւնները սնդեին, Գերմանիան չէր, որ դէնք պիտի բարձրացնէր: Եթէ անկախ, ինքնավար Հայաստանի

համար Գերմանիան իր պօսեքանցի վիտուրի մի սակրը չի տալ, դրա հակառակը՝ նա նոյն այդ վիտուրի սակրը չի էլ տալ նրան հակառակելու համար, եթէ ուրիշների կողմից այդ նպատակով միջամտութիւն լինի:

Բերլինի դաշնադրութեան մէջ Բիկոնափիլը թիւրքիայի ամբողջականութեան և սուլթանի ճիւղհեծանութեան գաղափարն ընդունել տուեց: Այդ էր եղած քաղաքականութիւնը և՛ Ֆրանսիացունը. այսօր նոյն այդ քաղաքականութիւնն ընդգրկած ունի Գերմանիան, և սա անուճ է այն՝ ինչոր անուճ էին իր նախորդները. այն տարբերութեամբ միայն, որ այդ քաղաքականութիւնը այժմ ունի իր շահերի հրաճայականութեամբ, — պատմութիւնը, անգլիական պետութեան մնայուն իրողութիւնները այդ անհրաժեշտ են դարձրել:

— Ի՞նչ անենք որ մեր անկախ գոյութիւնը կարողանանք պահել և թոյլ չտանք, որ մեր երկիրն էլ Լեհաստանի կամ թիւրքիայի օրին ընկնի, հարցրել էին Ջապոնական պետական անձնաւորութիւնները Հերբերտ Սպէնսերից: Մեծ փիլիսոփայի պատասխանն էր եղել, — առաջին հոգացողութիւնը անել թոյլ չտալ, որ եւրոպական կապիտալը իոշոր չափերով ներս մտնի Ջապոնիա, և ճանաչանց, որ եւրոպացիները տէր չդառնան ձեր երկաթուղային ցանցերին և հանքային հարստութիւններին: Սպէնսերը ճանաւորապէս ինդրել էր, որ այդ նամակը հրատարակութեան չտուէր մինչև իր մահը:

Թիւրքիան նոր չէ, որ սնտեսական շահագործման տեսակետից եւրոպացիների ձեռքն է անցել, այսօր արտադրութեան բոլոր ճիւղերը անցել են օտարների ձեռքը, և ի՞նչ ունի թուրք տիրապետող դասակարգը — եթէ ոչ իր բաժնեկաթարանը, որի նիւթն իսկ տալիս է եւրոպացին, դեռ աւելին՝ այդ երկաթուղային կողմից հացը, ուժիկն էլ եւրոպացուց կախումն ունի: Գերմանիան մինչև ցարդ այդ բոլորի մէջ մասն ու բաժին չունէր, այժմ ունի: Փոխուած ոչինչ չկայ, ինչոր փոխուել է, դա այն է, որ թիւրքիային բաժանող, տիրապետել ուղող ոյժերից մէկն էլ աւելացել է: Գերմանիան Սպէնսերեան քաղաքականութեամբ չէ, որ ընթանում է դէպի թիւրքիան, այլ ճիշդ նրա հակառակը. ուրեմն իր ամբողջականութեան և պահպանողականութեան քաղաքականութիւնը թիւրքիային անկումից բնաւ չի ազատուծ:

Հարց, այդ պահպանողականութիւնից պիտի օգտուի՞ թիւրքիան, այդ ժամանակամիջոցին իր ճարտարագործութիւնը պիտի զարգացնի՞, ինքն իր սեպհական ոյժերի վրան պիտի աշխատի կրթնել, իր պարտքերը պիտի թեթևանան, թէ՛ երկրի շահագործութիւնը դադար պիտի առնի: Գրանցից և ո՛չ մէկը. ընդհակառակը՝ երթալով աւելի պիտի թաղուի, իր հանրական պարտքը աւելի պիտի աճի, իր երկրի խաղաղ նուաճումը և՛ս աւելի մեծ չափով առաջ պիտի տարուի: Մինչև ցարդ ուրիշ պետութիւնների պահպանողական քաղաքականութիւնից մազաչափ անգամ օգտուեց թիւրքիան, որ այժմ էլ կարողանայ Պարիզի դաշնադրութիւնից մինչև Բերլինի դաշնադրութիւնը եւրոպական պահպանողական քաղաքականութիւնից ի՞նչ օգտուեց թուրքը, որ այժմ Գերմանական պահպանողական միտումից ի՞նչ օգտուի: Նա ո՛չ միայն չպիտի օգտուի, և ինքը այդ պայմանները, այդ ընդունակութիւնը, այդ հատունութիւնը չունի, այլ հեռոցհեռ էր արդէն ունեցածն էլ պիտի կորցնի և հասած պտուղի նման թափուելու համար մի փոքրիկ հոգով պիտի կարօտի, այն հեռանկարով, որ այդ հոգը Գերմանիայից էլ պիտի փչի: Գերմանիայի պաշտպանու-

թեանը վրայ յոյս դնող և հրճուող թուրք տիրապետող տարրը թող շատ էլ ապահով չզգայ իրեն: Գերմանիան ո՛չ իրեն փրկել կարող է և ո՛չ էլ միջամտութեան առաջին առնել, երբ հրամայական պայմանը ներկայանայ:

**ՌՌՒՍԻԱ**

Պաշտօնողական այդ քաղաքականութիւնը որ այսօր Գերմանիան ունի դէպի թիւրքիան, նոյն այդ քաղաքականութիւնը աւելի ճեճ չափով ունեցել է Ռուսիան: Մինչև 1833-ը շատերը կարծում էին թէ Ռուսիայի անմիջական քաղաքականութիւնն էր թիւրքիան քայքայել, բայց 1833-ին էր, որ սարդ կերպով երևան դրուեցաւ մոսկովեան այն մաքրափէյականութիւնը, որով նա պաշտպանը հանդիսացաւ սուլթանների տիրապետութեանը և արգելք եղաւ այն բոլոր ոյժերին, որոնք սուլթանական պարիսպների վրան էին ուզում խուժել: Այդ ժամանակից ակնյայտի եղաւ, որ Ռուսիան միևնոյն նպատակին հասնելու համար երկու որոշ քաղաքականութիւն ունի,—պահել պաշտպանել թիւրքիան, բայց ի՛ր համար, ապագային իրենը դարձնելու յուսով քայքայել, օգնել թիւրքիայից անջատուել ուզող ազգերին, հովանաւորել նրանց՝ նորից թիւրքիան տկարացնելու և իրեն յառաջիադայցմանը աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծելու: Թէ քաղաքապետական այդ ճեթոսներից ո՛րը, ե՛րբ և ի՛նչ պայմանների տակ է գործածել Ռուսիան— դա յայտնի է պատմութեամբ հետաքրքրուողներին, խնդիրն այն է, որ Գերմանիան գործունէութեան նոր եղանակ դուրս չի բերել թիւրքիայում: Ռուսական այդ քաղաքականութեանն ենք պարտական մեր ձախորդութիւնների ճեճ մասը.—թողնում ենք մեր ճակերեւոյթային մտածողներին այդտեղից եզրակացնելու թէ ուսական այդ դիրքը հետեանք էր միայն Հնչակեան Կուսակցութեան հակաուսական ձգտումներին:

Ռուսիան, մեր օրօք, իր այդ պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն քաղաքականութիւնը ցուցադրեց ո՛չ միայն Մայիսեան ծրագրի ջուր ձգելովը, այլև Աւստրո-Հունգարիայի հետ կապած 1897-ի համաձայնութեամբը և Միւրքշտէզի ծրագրի խմբագրութեամբը: Ռուսական պաշտօնողական քաղաքականութեանը աւելի նըպաստեց, մի կողմից, Ռուսանիայի և Բուլղարիայի հետ ունեցած իր կռիւները և հակառակութիւնները, որովհետև ուսական բռնապետութիւնը իր կանխահաշիւները արդարացած չտեսաւ, միւս կողմից՝ դրա դրդապատճառը դարձաւ իր այն անհամբերող և կանող քաղաքականութիւնը, որին հետեւում էին համաուսական և հակաժողովրդական պաղափարներով սագրուած ուսու պետական անձնաւորութիւնները: կայ մի ուրիշ հանգամանք էլ, դա Մայրագոյն Արևելքն էր.—թիւրքիան միշտ կարելի էր տրամադրելի պատառ նկատել, մինչդեռ Մայրագոյն Արևելքը ձեռքից դնում էր, չէ՛ որ Զապոնիան առանձին ձգտումներով էր երևան դալիս և եւրոպական պետութիւնները իրենց գործունէութեան մասնաւոր ասպարէզն էին դարձրել Չինաստանը: Ռուսը ուզեց նախ իր հաշիւը այդտեղ վերջացնել և ապա վերադառնալ դէպի թիւրքիան:

Այժմ Մայրագոյն Արևելքի դատը մի անգամ ընդ միշտ վերջացել է, Խաղաղական Ովկիանոսի տիրապետութիւնը անցեալ անուրջներին յիշատակ միայն կմնայ: Ռուսիան մի ոտքը պիտի դնէր Միջերկրական, միւսը՝ Խաղաղական Ովկիանոս: Երեսը դարձնելով՝ մէկը Հնդկաստանի մովափերին պիտի յենէր, միւսը՝ Սկանդինավիայի—այդ բոլորը յօրս ցնդեցան, և այդպէս էլ կը մնան մինչև վերջ:

Այժմ հարց է դալիս թէ՛ ներկայ պարագաների տակ՝ Բունապետական Ռուսիան դարձեալ անողք կերպով պիտի կառչի՞ իր պաշտօնողական քաղաքականութիւնից, նորից պիտի խորհի՞ թիւրքիան հովանանորել, մինչև որ ինքը զօրեղանայ, աւելի յարմարագոյն պա-

րագաներ ձեռք բերի՝ կաննելու և նորանոր պատառներ փրցնելու: Մեր կարծիքն է որ՝ ոչ: Ռուսիան այժմս ոտքով գլխով չի կարող մխրճուել այդ գործունէութեան մէջ, այն պարզ պատճառով, որ դա իրեն աւելի վնաս պիտի բերի, քան օգուտ: Ռ՛վ է որ այդ դրութիւնից աւելի պիտի շահէր.— անշուշտ ոչ ուսուր:

Պաշտօնողական քաղաքականութեան հետեանքը ի՛նչ պիտի լինի, եթէ ո՛չ եւրոպական կապիտալի յորդառատ խուժելը և թուրք հանրական պարտքի աւելի ճեճ ծաւալ ըստանալը: Ռուսը արտասահմանի կապիտալին է դիմում իր երկրի շահագործմանը համար, ո՛ւր մնաց որ իր հպատակները կապիտալի շահագործման դիմէին թիւրքիայի մէջ, նոյնը և՛ փոխառութեան նկատմամբ.— շարունակ որից փոխ դրամ պիտի առնի Մեծ Թուրքը իր անհասնում պէտքերին բաւականութիւն տալու, եթէ ո՛չ դարձեալ ուրիշներից: Ռուսը շանթալից կերպով 1900-ին յայտարարեց, թէ ինքը կարևոր զիջումներ էր ձեռք բերել, խօսք էր առել Բ. Գոնից, որ Հայկական վեց նահանգների մէջ կառուցուիլիք երկաթուղիները միայն ինքը պիտի շինէր, այդ շրջանը իր քաղաքական ազդեցութեան մասը կաղճած լինելով: Դեռ զիջումներ անելը հերիք չէր, խնդիրը գործադրելու մէջն էր: Ռուսը այդ գործադրութեան միջոցը չունէր ո՛չ երէկ, ո՛չ այսօր և ո՛չ էլ վաղը՝ ինչքան էլ որ այդ վաղը ուշ գալու լինի: Օգտուողը պիտի լինի, գլխաւորապէս, Փրանսիան: Իտալիան, Անգղիան, Աւստրո-Հունգարիան և Գերմանիան, Ռուսիան շատ լաւ գիտէ որ գերմանական գաղութային քաղաքականութիւնը աւելի խորունկ է, քան Անգլիականը: Ասիական թիւրքիայի տեղ հետզհետէ գերմանական մի գաղթալայր տեսնել, մի գաղթալայր՝ որ բուն Գերմանիայի շարունակութիւնը կաղճէր, այնպէս՝ ինչպէս որ Թունիսը և Ալժիրիան Մայր Փրանսիայի մասն են կաղճում,—այս է գերմանական գաղթային քաղաքականութեան օձեգան, և հետեւաբար պահպանողական քաղաքականութեան յարելով՝ Ռուսը ոյժ պիտի տար գերմանական և այլ պետութիւնների աստիճանաբար տիրապետութեանը, իսկ իր շատ ու քիչ ունեցած ազդեցութեան թուլութեանը և մի օր էլ խալաւ չքացմանը: Պահպանողական քաղաքականութիւնը Բալքաններում ո՛չ միայն որ և է օգուտ, այլ ճեճապէս վնաս բերեց ուսական դիտումներին: իր նպատակն էր այնտեղ պահել իրերի եղած դրութիւնը, մինչև որ Մայրագոյն Արևելքի իր գործը վերջացընէր և ապա աւելի ազատ ձեռքերով դէպի այն կողմը գառնար, իսկ դրա անմիջական հետեանքը այն եղաւ, որ մի կողմից Աւստրո-Հունգարիայի, ինչպէս և Իտալիայի, ազդեցութիւնը և՛ս աւելի ճեճ տարածութիւն ստացաւ, և միւս կողմից՝ տեղական փոքրիկ պետութիւնները աւելի ճեճ չափով ինքնագլխակցութիւն ձեռք բերեցին և իրենց ոյժերը զարգացրին ի վնաս Ռուսի: Եթէ ուսը ներկայումս թիւրքիայի նըկատմամբ պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն քաղաքականութեան յարի, դա կնշանակի թէ նա ուզում է ձեռք վեր առնել իր դարևոր այն ձգտումից, որի ետքիւնը եղել է Սև Մովը ուսական լիճ՝ դարձնել, Միջերկրականը՝ ուսական ծով, այդ կնշանակի Պօլտոյ, Ադէքսանդրեանի նուաճման զաղափարը խալաւ թողնել — այդ կնշանակի Պարսկաստանի նկատմամբ ի՛սկ իր ստամած յոյսերը կասկածանքի ենթարկել: Թիւրքիայի նկատմամբ պաշտօնողական հայեցակէտերի մէջ Ռուսը կը ճանի միայն այն ժամանակ, երբ նա կա՛մ կմիանայ Եւրոպական Գաշտակցութեանը կամ նրա ազդեցութեան շրջանակի մէջ կճանի, բայց ուս կայսերական քաղաքականութիւնը դժուար թէ այդ ինքնասպանութեանը դիմի:

Բանի որ պաշտօնողական քաղաքականութիւնից բացի վընասից ուրիշ և ո՛չ մի օգուտ, ուստի Ռուսը ստիպուած է թիւրքիայի վերաբերմամբ հետևել մի քաղաքականութեան,

որի յատկանիշը չէ կարող լինել պահանջողական, հատկանալով այս բառը իր պատմական նշանակութեամբ: Եւ ինչո՞ւ համար,— շատ պարզ է, Յայրագոյն Արևելքի դռները ծի անգամ փակուելով՝ մնացել են ծիայն Արևելքի դռները:

Ռուսիան եթէ այսուհետև շահելիք ունի,— դա պիտի լինի Արևելքից:

Այդ քաղաքականութիւնը չի էլ կարող լինել կլանիչ նորից հասկանալով առաջուան իմաստով, որովհետև այլևս գործ չպիտի ունենայ ծիայն թուրքի հետ, այլ Քերմանիայի, Անգղիայի, Աստրո-Հունգարիայի, Բալքանեան փոքր պետութիւնների և զարթնող ազգութիւնների:

Ռուսիան այլևս ո՛չ կարող է թիւրքիան պահպանել, հովանաւորել և ոչ էլ նրան ծինակ կլանել — այդ քաղաքականութեան պատմական ժամանակը անցաւ:

Մնում է ուրիշ քաղաքականութիւն, այն է՝ թիւրքիային եւրոպականացնել, զօրեղացնել, — բայց այդպիսի ծի քաղաքականութեան չի կարող հետևել ցարիզմը, որովհետև, եթէ աւելին չստանք, այդտեսակ ծիտուներ չունի եւրոպական ո՛չ ծի պետութիւն:

Ռուսը կհետևի անծիջական բաժանման քաղաքականութեան, այսինքն ծիս պետութիւնների հետ ծիանալով՝ կհամաձայնի թիւրքիային բաժան-բաժան անելու: Արդեօք նա կհետապնդի թիւրքիայի զանազան ծասերը նրա բաղիւստացի ազգութիւնների տարւ քաղաքականութեանը:

Եթէ այդ երկու հարցերից ծեկն ու ծեկին դրական պատասխան չի կարելի տալ, դէթ որոշ կերպով կարելի է ասել, որ Ռուսիան յարձակողական դիրք կընդի դէպի թիւրքիան, այսինքն ծի դիրք, որի հետևանքը չի լինիլ թիւրքիան պահել, հովանաւորել, որպէսզի իր ծիայնակ կլանելիք պատառ դառնար. նա այժմ թիւրքիայի վերաբերմամբ ծոտաւորապէս, կունենայ այն քաղաքականութիւնը, ինչոր ունի Անգղիան: Անգղիան էլ առաջ թրքական ամբողջութեան, սուլթանական իրաւունքների անբռնաբարելութեան կողմնակից էր, բայց այսօր նա ունի ծի քաղաքականութիւն, որ յարձակողական է, այսինքն statu quo-ին հակառակ,— չպահել իրերի եղած դրութիւնը, ջանալ ստեղծել ծի նոր կացութիւն: Այդպէս կլինի իր հետեան ծեջ, ծեք կարծիքով, և՛ Ռուսի քաղաքականութիւնը:

Եզրակացութիւն, — Ռուսը դէպի թիւրքիան կունենայ ծի քաղաքականութիւն, որ բոլորովին չի ունենալ իր առաջուան քաղաքականութեան բնաւորութիւնը:

Ուրեմն քանի որ ցարիզմը իր առաջին գործը պիտի անի ներքին յեղափոխութեան դէմ ծաքառել, քանի որ իր անծիջական ուշադրութիւնը պիտի դարձնի իր ծովային ոյժը վերաշինել և քանի որ առաջուան քաղաքականութեամբ չի կարող սուլթանիզմին և նրա երկրի պահպանութեանը հոկել և հովանաւորել, ասել է թէ նա առաջուան դիրքով այլևս չի ծանրանալ Հայկական Խնդրի վրան, եթէ ուզի իսկ, և հետևաբար այդպիսի ծի դրութիւնից օգտուիլը մնացել է Հայ Յեղափոխութեան շրջահայեաց և իսելօք գործունէութեանը, ասել է թէ ծածկա-Հայ յեղափոխական գործին որքան կարելի է շատ ծեք ոյժ և ծաւալ պիտի տալ, որպէսզի նա պէտք եղած ուժգնութեամբ պայթի քաղաքական յարձակումը և պահանջի պարագային, որ ստեղծուելու վերայ է: Ռուսին եթէ մնալու լինէր, իր ծանապարհի վրայ Բուլղարիա չէր ուղիւ որ ստեղծուէր, բայց իրերի ընթացքը այդ անխուսափելի դարձրին, նոյնը կլինի և՛ Հայաստանի նրկատմամբ, ու Լօբանովի պոռչտուքը պատմական պոռչտուք էլ կմնայ:

ԱՆԳՊԻՍ

Պահպանել կլանելու դիտուածով քաղաքականութիւնից ինչոր կարելի էր ասանալ, Անգղիան ստացաւ: Այսօր թուրքի շնորհի ծեք լիս աղալիք ծի թիւրքիա նոյնքան վտանգաւոր է իրեն համար, որքան որ ծի զօրեղ թիւրքիա: Թէ պահպանողական և թէ աղաւական նախարարութիւն այդ նկատմամբ հայեցակէտերի նոյնութիւն ունեն: Անգղիան ուղղակի յարձակողական քաղաքականութիւն ունի, նրա որոշ նպատակն է թիւրքիան բաժանել, իսկ թէ այդ բաժանուածով ո՛ր ծասը ո՛ր ազգութիւններին և պետութիւններին տալ,— դա համաձայնութեան և գործունէութեան լինիլի է, զլիսաւորն է, այսպէս թէ այնպէս, թիւրքիան պատմական թատերաբեծից վայր բերել: Անգղիայի այդ քաղաքականութիւնը որոշ է Բալքաններում, որոշ Արաբիայում և Աֆրիկայում, որոշ և՛ Հայաստանում: Նա զիտէ որ պահանջողական, սպասողական քաղաքականութիւնից օգտուողը աւելի պիտի լինի Քերմանիան, ուստի իրերը բռնադատել, և որքան շուտ, այնքան աւելի լաւ: Նա ծանուար բարեկամական յարաբերութիւններ ունի դէպի Բալքանեան փոքր պետութիւնները: Նա ծինչև անգամ Սերբիային պաշտպանեց ընդէմ Աստրիայի, թէև սրա հետ էլ բարեկամ է: Անգղիան փորձով տեսաւ թէ նորածագ պետութիւնները աւելի ծեք թուրք կարող են լինել իր հակառակորդների դէմ, քան կարելի էր կարծել: Մեծ Բուլղարիան եթէ ստեղծուած լինէր, այսօր նա աւելի ծեք պատնէշ եղած կլինէր Քերմանիայի և Ռուսիայի դէմ: Չէ որ իր աւանդական քաղաքականութիւնն է ծովափնեայ փոքր, քան ծեք պետութիւններ տեսնելը: “Հասել է ծամանակը Բիկօնաֆիլիլի արձանը տապալելու”, ասել է Ռէյնո Բրայսը, և դա շատ ճիշդ է: Բիկօնաֆիլիլէ քաղաքականութիւնը այսօր նոյնքան ծեք է, որքան 33-ի ցարիզմինը: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք թէ այսօր համաշխարհային քաղաքականութեան առաջին թելը գտնուած է Անգղիայի ծեքին— նա դաշնակցած է Չապօնիայի հետ, համաձայնութիւն ունի Փրանսիայի հետ, ինչպէս և Իտալիայի, Իսպանիայի: Եռապետական դաշնակցութիւնից երկուսը՝ Իտալիան և Աստրո-Հունգարիան իր բարեկամն են, երկուսեան դաշնակցութիւնից էլ Փրանսիան իր բարեկամն է: Եռապետական դաշնակցութեան ծեք հակառակորդ ունի իրեն Քերմանիան, իսկ երկուսեանի՝ Ռուսիան: Քերմանական հակառակորդութիւնը շատ հեռուն չի կարող երթալ, ծի կողմից որ նա արդէն կղղիացած է, ծիս կողմից, ծեքը զիտենք, որ թիւրքիայի պատճառով Քերմանիան չի դուրս գալ եւրոպական Կօնցերտից և նրա քաղաքականութիւնը ծինչև վերջ չի կարող հակառակ Աստրիականին և Իտալականին երթալ: Իսկ Ռուսիայի հետ համաձայնութեան գալ այսուհետև աւելի դիւրին պիտի լինի, նրա համար, որ նա էլ իրերի բնական բերծունքով, ստիպուած է իր հաշիւը ծաքել թիւրքի հետ, և որքան շուտ, այնքան աւելի լաւ: Արդէն երկու պետութիւնների ծեք համաձայնութեան բանակցութիւններ են տեղի ունենում — այդ համաձայնութիւնը, ինչ էլ որ լինի իր բնաւորութիւնը և ծաւալը, թրքական գործին հետ կապ ունի, լինի այդ յայտնի կամ ծածուկ:

Եզրակացութիւն, — Անգղիայի քաղաքականութիւնը յարձակողական է, նա statu quo-ն պահպանելու դէմ է: Անգղիան անկեղծ կերպով ծգտել է Հայկական Խնդրի լաւծանը, ուրիշ է թէ նա անկարող է եղել այդ ծգտուծը իր բարործել: Նա ո՛չ ծեք լաքել է, ո՛չ ի զուր յաւաղրել, և ո՛չ էլ ծեք իր լաղալիքը զարձրել, իրողութիւնը այն է, որ անգղիական քաղաքական շահը կցուած, յարմարուած է Հայկական շահին, և ծիշտ էլ Անգղիան կմնայ ծեք բարեկամը, Հայկական Խնդրի բարեջաղ լաւծանը աշխատող

մէկ ազգակը: Անգղիայի վրայ ի դուր մեղադրանքներ թափելուց առաջ՝ եթէ մենք մեր անհամապատասխան գործունեութիւնը ճատնանիշենք, աւելի արդար եղած կլինենք զէպի իրականութիւնը:

**ԻՏԱԼԻԱ**

Ի՛նչ է Իտալիայի յարաբերութիւնը, — պաշտօնական արտայայտութիւններին նայելով՝ վերջին ատիճան խաղաբար և օրինական, այսինքն եղածը, գոյութիւն ունեցողը յարգել: Մայիս 15-ին պր. Տրուտինի յայտարարեց, որ Իտալիայի քաղաքականութիւնը զէպի Թիւրքիան «գերազանցօրէն անշահախնդրական է և խտրարար, հիմնուած օսմանեան կայսրութեան պահպանութեան, ինչպէս և Աւստրո-Հունգարական, Ռուսական և Բերլինի դաշնադրութիւնը ստորագրող միւս բոլոր պետութեանց կատարեալ Համաձայնութեան վրայ»: Սա պաշտօնականն է, խօսքերի այն լեզուն, որ նպատակ ունի խոհականը թագցնել, աւել այն՝ ինչոր պէտք չէ, չստել այն՝ ինչոր պէտք է: Իրականութիւնը այն է, որ Իտալիան ոգի ի բռնն աշխատում է օսմանեան կայսրութեան անդամատութեանը, և այդ որքան շուտ՝ այնքան աւելի լուս: Անգղիայի հետ ունեցած իր *bonne entente* (սերտ համաձայնութիւնը) ուրիշ նպատակ չունի Աֆրիկեան Տրիպոլի վրայ ունեցած իր հայեացքները որոշ են, — «խաղաղ թափանցողութեան» քաղաքականութեամբ Իտալիան արիւսպետութիւնը այդտեղ բաւականին ծառայուն արձատներ է ստացել: Նոյնը և՛ս աւելի մեծ չափով կարելի է ստել Ալբանիայի նկատմամբ, անտեսապէս և քաղաքականապէս այս երկիրը իտալական գործը ազդեցութեան շրջանակն է կաղձում: Վենետիկի Հասարակապետութեան հետապնդած դադափան էր Արիւսիանը իտալական ծով դարձնել, — ժամանակակից Իտալիան այդ դադափարի իրագործուածը կատարեալ անհրաժեշտութիւն է համարում իր ապագայի տեսակէտից: Ոչ ոքի գաղանիք չէ, որ իր դաշնակից Աւստրո-Հունգարիայի հետ ունեցած անհամաձայնութիւնները այդ ծափն է: Սան Ջիովաննի պը Մէլուայից մինչև Սա և Դանուբը ծրագրած երկաթուղին մի մեծ ազդակ պիտի լինի խաղաղական նպատակներին, — երկաթուղու այդ դժով Յետտիսիէն, Բելգրադը և մինչև անգամ Բուքրէշը անհամեմատ ծոտնում են իրեն: Ալբանական ցեղապետների հետ ունեցած իր բարեկամական յարաբերութիւնը որոշ է, որոշ է և այն, որ Իտալիան ո՛չ մի խրախուսանք չի իննչում ալբանական ցեղափոխականներին: Իտալիայի յարաբերութիւնը զէպի Ռուճանիան, Սերբիան, Յունաստանը, Մոնթենէգրոն, Բուլղարիան աւելի մտերմական է, քան անտարբեր:

Այդ բոլորից պարզ է, որ Իտալիան էլ օսմանեան պետութեան ամբողջութեան և պահպանութեան գաղափարն ունի՝ պաշտօնապէս, բայց դրա արժէքը յայտնի է թէ ի՛նչ է: Պարզ է և՛ այն՝ որ իր արեւելեան քաղաքականութեան մէջ նա համընթաց կլինի Անգղիային միշտ, այդպէս են պահանջում այդ երկրի մուտան իրողութիւնները: Իտալական կառավարութիւնը, անկախ իրարու յաջորդող միմաբրութիւններից, մասնաւոր համակրանք է ցոյց տուել զէպի Հայկական Դատը, և նա այդպէս էլ միշտ կմնայ:

**ԱՌՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ**

Աւստրո-Հունգարիան Արեւելեան ամէն բաղկացութեան մէջ կայ, բայց նա հետևողական է; թէև դա չի արդիւում, որ նա միշտ իր բաժինը չունենայ: Քանի որ իր սեպհական ապական կասկածանքի տակ է, քանի որ Տրանսլէյտանիան և Յիւլէյտանիան շատ անգամ իրարու հակառակ քաղաքական հայեացքներ ունեն, ուստի նա յաճախ նախընտրում է լինել և մնալ պահպանողական, դա աւելի օգտաբեր է իրեն. արդէն 1897-ի համաձայնութիւնից ինքն աւելի շահուեց, քան Ռուսը: Ո-

րոշ է իր այն դիրքը, որ նա չի ցանկանում Հաբսբուրգների տիրապետութեան և Էգէեան ծովի մէջ տեսնել մի մեծ պետութիւն, հէնց դրա համար էլ Սան Ստեփանօի դաշնադրութեամբ ստեղծուած Մեծ Բուլղարիան իրեն սարսափեցնող հանգամանք երևեց, ուստի և այն ժամանակ միացաւ Անգղիայի հետ, ինչպէս և նոյն այդ նըպատակով ջանաց անդամաւորել Միւրցշտեպի ծրագրերը: Որքան որ Աւստրիան յարձակողականութեամբ չէ, այլ ճարպիկ զիւսնապետութեամբ է, որ ուզում է Սալոնիկին ծօտենալ, այնուամենայնիւ նա համադերժանականութեան արեւելեան ռահիւրան չի կարող դառնալ, ինչպէս որ շատերը երազում են, և ոչ էլ գերմանական շահերի և Թիւրքիայի ամբողջականութեան անտեսով սուր կհանի. նա կբաւականանայ միայն խորաւանքներով, իսկ սա անգոր է մինչև վերջ իրերի ընթացքը կասեցնել և նրան քմածին ուղղութիւն տալ: Ռուսը ինքնուրոյն Բուլղարիայի ստեղծուելը իր սահմանների վրայ չէ ուզել տեսնել, բայց տեսաւ, հակառակ իր կածքին, թէև իր գործակցութեամբ, նոյնը կլինի և՛ Աւստրո-Հունգարիային, սա էլ իր ցանկութեան հակառակ Ինքնավար Մակեդոնիան ոչ շատ ուշ իրականացած պիտի տեսնի, գուցէ և՛ իր ակամայ աջակցութեամբը:

Մասնաւորապէս պէտք է շեշտել այն հանգամանքը, որ Աւստրիական կառավարութիւնը սկզբունքով յարեց Մայիս 11-ի Մրազրին, իր միւս դաշնակիցների հետ միասին: Թէ Զէյթունի պայմանագրութեան և թէ շատ հանգամանքներում իր ներկայացուցիչները միշտ համակրանք են յայտնած պէտի Հայկական Դատը, որքան որ պայմանները կարող էին թոյլ տալ: Եթէ Աւստրո-Հունգարիան մեր Դատի միջամտութեան համար սուր չի մերկայնիլ, այն էլ կայ, որ այդ նպատակով սուր մերկայնողին չի հակառակիլ և իր աջակցութիւնը ցոյց կտայ՝ որոշ չափով:

**ՊՐԱՆՍԻԱ**

Թիւրքիայի ճնշումով ժողովրդների զարթումին և նրանց իրաւունքների վերստացման օգնելը Ֆրանսիայի աւանդական քաղաքականութիւնն է եղած և է՛. այդ ընթացքը լիովին համապատասխանում է իր շահերին: Այդ մասին միայն այն պիտի նկատենք որ՝ բարեբաղաբար՝ այժմս Ֆրանսիան ո՛չ առաջուան մեկուսացած դիրքն ունի և ոչ էլ իր արտաքին քաղաքականութիւնը կուրօրէն հետևողական և ենթակայ է ռուսականին, ինչպէս որ է՛ր Հանտօսի նախարարութեան օրօք: Ֆրանսիան պէտք եղած աջակցութիւնը մեղ կտայ, եթէ Հայ Յեղափոխութիւնը կարողանայ արտադրել այն՝ ինչոր անհրաժեշտ է արտաքին միջամտութիւն յառաջ բերելու համար, եթէ Հայ Յեղափոխական շարժումը նոր կացութիւն ստեղծելու տարբեր պայմաններ կտայ:

**ԲԱՒԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ**

Մինակ եւրոպական մեծ պետութիւնները չեն, որ այժմս վճռական դեր են խաղում թրքական գործերի տեսակէտից, կան և՛ Բալքանեան Փոքր Պետութիւնները: Իրաւ է վերջիններս Բերլինի Դաշնադրութեան ժամանակ մի առանձին կարևորութիւն չունեցան, քանի որ նրանց պատուիրակներն անգամ վեհաժողովին անդամակցելու իրաւունք չունեցան, բայց այսօր նրանք աւելի գերակշիւ դիրք են ձեռք բերել, քան առաջ: Անշուշտ թրքական կայսրութեան ճակատագիրը աւելի շուտ և բոլորովին այլ կերպ կանօրինուէր, եթէ Բալքանեան պետութիւնները իրարու հետ մի ընդհանուր համաձայնութեան կամ դաշնակցութեան յանգամ լինէին, բայց որովհետև նրանք բոլորն էլ առանձին առանձին վեր առած մեծամտական ձգտումներով են սոգորուած, ուստի և միմեանց նկատմամբ հակաձարտական ձգտումներ ունեն, քան համերաշխական, և հէնց այդ առիթից մեծապէս օգուում է ինքը տաճիկը իր տիրապետութիւնը պահելու, ներհակութիւնները խոտցնելու. միւս կողմից՝ այդ պետութեանց քոյաքակա-

նախնիքը լինում է հետևողական, թերադրական և համաձայն դրսից եկած ցուցումներին, ինչոր մեծապես խառնաշփոթում է իրերի դրուժեանքը և պատճառ դառնում թրքական բռնապետութեան շարունակութեան: Ի հարկէ եւրոպական մեծ պետութիւններէն ոմանք ո՛չ մի միջոց չեն խնայում եղած անհամաձայնութիւնները շեշտելու և թնյլ չտալու, որ նրանք մի ընդհանուր հասկացողութեան դան, քանի որ այդպիսի մի իրողութիւն բացարձակ կերպով հակառակ պիտի լինէր իրենց շահերին: Այս աչապէս լինելով, սակայն դրանից չի կարելի եղրակացնել թէ նրանք միասին կամ առանձին վեր առած կողմակից են թուրք բռնապետութեանը, — երբէք: Խընդիւրն է այն է, որ նրանք չափազանց երիտասարդ լինելով չեն կարողանում կողոպուտի մեծութեան մէջ իրարու հետ համաձայնիլ: Նրանք փոքր չափով նոյնն են Թիւրքիայի նկատմամբ, ինչոր եւրոպական մեծ պետութիւնները: Բայց նշանակալից է այն հանգամանքը, որ Բուլղարիան մասնաւոր բարեկամական որոշ յարաբերութիւններ ունի Ռուսիայի հետ. «Մենք մեծապէս գնահատում ենք Ռուսիայի բարեկամական անկեղծ դաշնակցութիւնը և մենք մեր կողմից պարտականութիւն ունինք նոյն բնաւորութեամբ վերաբերմունք ունենալ դէպի նա», — ասաց Ստանսիով Սոբրանիայում 1906-ի նոյեմբեր 15-ին: Աստուհունգարական խորհրդանանքը պիտի աշխատի թոյլ չտալ, որ Սերբիայի և Բուլղարիայի մէջ համաձայնութիւն կայանայ, և արդէն ամէն թակարդ նա լարում է, որ այդ ուղղութեամբ նոր իրողութիւններ չստեղծուին. բայց մինչև վերջ իրերի բնական ընթացքին չի կարելի հակառակ երթալ, խորհրդանանքը միառժամանակ կարող է իր յաջողութիւնը ունենալ, բայց ո՛չ ընդ միշտ:

Միւսների հետ համաձայն կամ ոչ, Բուլղարիան մինչև վերջ չի կարող անտարբեր մնալ, նա պիտի հարկադրուի պատերազմի դաշտ քուրս գալ, եթէ Մակեդոնական ինդիլըրը զէթ ինքնավարութեամբ աւարտ չգանի:

**ՅՆԳԱՓՈՒԱԿԱՆ ՈՅԺԸ**

Փոքր այդ պետութիւնները՝ Ռուսիայի, Բուլղարիայի, Յունաստանի, Սերբիայի, Օսթրիայի և Գերմանիայի սրանք բոլորը, այսպէս ասած, օրինական, լէգալ գործողներ են, բայց կայ իրերը շուրջ առլու ամենաուսջին պղպղիլ յեղափոխական ոյժը: Բայքաններում գործող յեղափոխական կուսակցութիւնները, որքան որ այժմս, ըստ երևայթին, հանդարտ են, բայց դրանով նրանք գործունէութիւնից դադրած չեն, մի կողմից իրենց ոյժերն են վերակազմուրում, միւս կողմից սպասողական դրութիւն ունեն, որպէսզի փոքր և մեծ պետութեանց յարաբերութիւնները աւելի պարզուին, և նրանք բոլորն էլ նորից փորձով համոզուին, որ Թիւրքիայի մէջ ոչ մի բարեփոխութիւն արձատական և արվիւնաբեր չի կարող լինել՝ քանի որ տաճիկ կառավարութիւնը կայ այնտեղ: Բուլղարական, Ալբանական, Սերբիական յեղափոխական տարրերը թուրք բռնապետութիւնը Բալքաններից խորտակող և հեռացնող առաջին տարրերը կլման: «Մակեդոնիան ծակեղանայիներին» նշանաբանը կիրականանայ, բայց դա կլինի, պիտաւրապէս, Բալքաններում գործող յեղափոխականների շնորհիւ: Այդ ոյժը անսխալելի կլմայ մինչև վերջ: Յեղափոխական տարրը բեռը վեր հանող ճախարակն է:

(Շարունակելի)

**Ս. ՍԱՊԱՆՆԻ-ԳԻՒՆԵԱՆ**

**ՍԱՍՈՒՆՅԻ ԳԵՎՈՆ**  
**Ժ ՈՂ Ո Վ Բ Գ Ի Զ Ս Ի Ն Կ Ը**

**Կ Ե Ն Ս Ա Գ Բ Ա Կ Ա Ն Գ Մ Ե Բ**

1892-1894 թուականին, Սասունի մեր յայտնի կուուղ ընկերներն էին՝ Լևոն, Գեօ, Կրպօ, Սօղօ, Օհաննէս, Արմէնակ, Գրգօ, Մեքրոն, Ադամ: Սասունից ալ, մեծ մասամբ, անունները կրճատուած կը յորջորջեն. կրճատուած կանչելը սովորական և աւելի մտերմական է: Վերոյշեալ մեր ընկերներէն շատերը, դժբախտաբար, նահատակուած յայտնի և անյայտ գերեզմաններու մէջ՝ սե հողին են յանձնուած: Ի՛նչ փոյթ թէ անոնց շիրիմները անշուք կը ճընան, երբ անոնց անբիծ յիշատակները մեր սրտերը երախտազիտութեամբ կը լեցունեն և անոնց թողուցած անջնջելի տպաւորութիւններն մեր մտքին մէջ՝ յաւէտ պահուած կը մնան:

Վերջերս խորին ցաւով իմացայ, ասոնցմէ միոյն, Սասունի Փանայ գաւառի Մգթին գիւղացի Գեօյի մահը: Մշոյ Սուրբի գիւղին մէջ՝ մայիս 28-ին, մասնաւորով՝ զօրքերէ կը պաշարուի և վեց ժամ կատաղի կռիւ մղելէ ետքը՝ կը վիրաւորուի և ապա՝ կը հանգչի: Միթէ պէտք է ցաւիլ, քաջաբար մեռնող, նահատակուող ընկերներու մահուան վրայ, — ո՛չ, որովհետև այժմ կը գտնուինք այնպիսի ժամանակի մը մէջ, որ աւելի արժէ կենդանիներու վրայ լալ, քան այն քաջերու մահուանը, որ անմահութիւն է արդէն:

Գեօն 13-14 տարեկան հասակին մէջ՝ 1887 թուականին Ս. Առաքելոց վանքի վարժարանին աշակերտած ու հագիւրել կարող սովորած էր, երկու-երեք տարի ետքը՝ կը թողու վանքը և կը հեռանայ, չուղելով դառնալ տիրացու կամ փոքրաւոր:

Վանքէն հեռանալէն յետոյ՝ հօրը տունը կը դառնայ, սակայն հոն ալ շատ չը մնար: Կը մեկնի դէպի Հալէպ՝ իւր ուսման ցանկութեան յազուրդ տարու յոյսով: Բայց իր՝ սր հարուստի հոգն էր, թէ սասունցի կամ գաւառացի հանձարներ այս կամ այն խանի անկիւնները կը մեռնին: Հալէպի մէջ՝ փոխանակ վարժարան մտնելու կամ ուսման ծառայելու, Գեօն հալիւ կը յաջողի հացադործի մը ձօռ մտնել և աշխատիլ: Միջանկեալ ըսեմ, որ սասունցիք առ հասարակ դէպի Տիգրանակերտ (Տիարպէքի), Եղեւիս (Ուրֆա), Բերիս (Հալէպ) պանդխտելով՝ կը պարապին, կամ հացադործութեամբ և կամ ջաղացպանութեամբ: Իրենց այդ արհեստներով իսկ մեծ ծառայութիւն կը մատուցանեն անօթի պանդուխտներուն և պատահական ճամբորդներուն:

Հալէպի մէջ՝ նա հացադործութեամբ պարապած ատենը, 1892 թուականի գարնանամտի ատենները, Աթէնքէն, Կորնթոսի պարանոցէն վերադարձող Վանցի, Մշեցի, Ախաթցի ճամբորդներու կը պատահի, որոնցմէ կը տեղեկանայ ընկեր մասնատեանին ծպտեալ արդէն Սասուն գացած լինելը և անոնց ալ՝ միևնոյն տեղը երթալու գիտաւորութիւնը: Գեօն այդ բոլորը իմանալէ վերջը՝ հացադործութենէ կը հրաժարի և կը պատրաստուի ու միայնակ կը հեռուի խորհրդաւոր ճամբորդներու հետքին:

Օր մը Կելիէկիւղանի ձօռ սարի մը վրայ մացառի մը մէջ նստած էինք: Յայտնեցին թէ Հալէպէն պատանի մը եկած է և մեզ տեսնել կուզէ: Կանչեցինք, իմանալու համար, թէ ո՛վ է: Տեսանք, որ 17-18 տարեկան աղուամազ պեխերով սե յօնքերով, սե ու վաւուրուն աչքերով, սե

ու դանդուր ծագերով, ցորենագոյն դեմքով, կրք երեսով, քիչ լեցուն ճիշահասակ պատանի ծը՝ խենջալը մէջքին և չախմախը հրոյանը ուսին ճեղի ներկայացաւ: Հարցուցի թէ ինչու եկած էր և ի՞նչ կուզէր: Պատասխանեց, — իմացայ ձեր Հալէպէն անցնիր և դէպի այս կողմ գալը: աշխատեցայ ճամբան ձեզի հասնել, բայց չը յաջողեցայ: Առանց մեր տունը հանդիպելու՝ ուղղակի ձեր ետեւէն եկայ և բազաւոր եմ ձեզ հոս գտնելու: Եկած եմ խնդրելու, որ ինձ ետ չը դարձունէք, և ձեր մէջ ընդունիր: Ես պատրաստ եմ ամէն ներութիւն յանձն առնելով՝ ձեզ հետ ապրիլ, ձեզ հետ գործել և ձեզ հետ մեռնիլ: Ուրիշ ոչինչ:

Չէինք կարող, առանց իւր անձնաւորութիւնը լաւ ճը ստուգելու, ընդունիլ զինքը, ճանաւանդ, նկատի չունենալ անոր փոքր ու անփորձութեան հասակը, ատոր համար ըսի իրեն. «գնա ձեր տուն, երբ հարկ լինի, քեզ լաւ կը գրկեմ»: և նա գրուլը խոնարհեցով՝ արտաւ դեմքով հեռացաւ:

Ես կարծեցի որ Գէվոն անդամաւոր իրենց տունը գացած կը լինէր, բայց սխալուած էի: Նա փոխանակ ճնողացը գիրկը դառնալով՝ Տաւրիայ Փորիս գիւղի՝ իրենց ազգական տէր Գաբրիէլի ձօտ էր գացած և խնդրած՝ որ իրեն համար բարեխօսէ և ճիշամտէ, որպէսզի ձեր խմբին մէջ առնենք:

Մեր ձօտէն հեռանալէն 20-25 օր ետքը, տէրտէրը ետունը ձգած՝ բերաւ մեր ձօտ, ճանօթ Խաչօ Գասպարի տունը և խնդրեց որ անպաճառ Գէվոնին մեր մէջ ընդունինք, վատահայեցիլ՝ անոր անկեղծութեան և անձնուիրութեանը ճապին:

Այդ օրէն ետքը՝ Գէվոն մեր մէջ մնաց և մեր անբաժան ընկերը դարձաւ:

Այդ ատեն մեր հրոսակաց խումբը կը կառավարուէր Ալիզընանցի Լևոն Մխիթարեանի, մեր անձօռանալի ընկերի խմբապետութեամբը: Օր ճը պարագաները այնպէս բերին, որ Լևոնը և ինքը միասին գործի ճը երթան: Երբ վերադարձան՝ հարցուցի Լևոնին թէ, Գէվոն ինչպէ՞ս գտար, նա ուրախութեամբ և զովեառով պատմեց անոր ճապին և յուսադրեց ինձ, որ «Գէվոն ձե՞ծ ապագայ կը խոստանայ»: Հետաքրքրուելով՝ հարցուցի, թէ ինչէ՞ն գիտցար, ըսաւ, «Անիճամը շատ ճարպիկ է ու սրտոտ, որովհետեւ», աւելցուց նա, «երբ թշնամուն վրայ յարձակում գործեց, տեսայ որ անխնայ կերպով հարուածը մէկը միւսի ետեւէ կիջեցնէր, առանց աչք բանալ տալու, նոյն խի մի հարուած ալ սխալմամբ իմ թևիս գարկաւ և ես կարծեցի թէ թևս կտորուեցաւ: Թևս թէև ցաւցուց, բայց սիրտս ուրախացուց, որովհետեւ, հասկցայ որ լաւ ընկեր ճը ունեցանք»:

Այնուհետև Գէվոն միշտ Լևոնի կողքէն կը քալէր:

Մի օր ևս Գէվոն, իրեն հասակակից Կէլիէլիզանցի մի պատանիի հետ վէճի բռնուեցաւ ըջնիս Պետօի տանը երդիկի վրայ. մի ակնթարթի մէջ՝ վէճը կռուի փոխուեցաւ և ես տեսայ յանկարծ հակառակորդի ճակտի վրայէն արիւն վազիլը . . . ձեռքի փայտով դարկած էր: Երկուստեք հանդարտեցընելէ յետոյ՝ հետաքրքրութեամբ հարցուցի միջադէպի զըրգապատճառը և իմացայ որ պատանեկական տաքարիւնութենէ յառաջ եկած ճանկական չարութեան ճը արդիւնք էր, որոյ մէջ յանցաւորը աւելի մեր ընկերն էր եղած, քան թէ անոր հակառակորդը: Գիւղէն հեռանալնէս ետքը՝ ընկերական դատաստան ըլլինք և Գէվոն յանցաւոր գտնուեցաւ: Պետք էր պատժել զայն, աւելի ճիշդը զգացնել իւր թերութիւնը: Ուրշուեցայ ութ օր Գէվոն հեռացնել մեր խմբէն: Կանչեցի ու հարցրուցի ընկերներուն որոշումը: Նա մէկէն հիասթափուեցաւ և սկսաւ տղու ճը պէս լալ . . . զինքը մինակ թողուցի և քաշուեցայ: Քիչ յետոյ՝ ճատխտով գրուած թղթի կտորով ճը ներկայացաւ, որով ներողութիւն կը խնդրէր և կը խոստանար այլևս, ուրիշ ճամանակ, այգլխի արարքներու մէջ չը գտնուիլ և խեղդուկ ճայնով ճը ըսաւ. «Ա-

ւելի լաւ է ընկերներս զիս մեռցնեն ու հոս թողեն, քան թէ զիս իրենցմէ մէկ ճամ հեռացնեն այսպիսով, և կրկին ըսկըսաւ լալ:

Ընկերներն տեսնելով անոր պարզ ու ճարուր սրտի արտայայտութիւնը, կրկին խորհրդակցութեամբ ներքեցինք իրեն, և նա ճօտեցաւ ու բոլոր ընկերաց ձեռքերը սեղմեց: Նա, անկէ ետքը, դարձաւ կատարեալ համեստ և սիրելի ամենուն:

Մի քանի օրինակներ սիրելի Գէվօի քաջագործութիւններէն:

1893-ի գարնան, ընկեր ճամատեանը բռնուեցաւ ընկեր Սօդոյի հետ: Կառավարութիւնը յարճար առիթ համարեց Տաւրիկը՝ «ըմբօսաներու» այդ բոյնը քանդելու, բնաջնջելու: Ձիւնայ շէջի Մուհամմէտի միջոցաւ քիւրդ ցեղերը գրգռեց և հաղարար Պատրգանցի, Բաղրանցի, Խարղանցի, Սասունցի, և այլ քիւրդ ցեղեր միասին հաւաքուած յարձակում գործեցին Տաւրիակայ վրայ՝ 1893 յունիս 17-ին, սակայն ձե՛ծ կորուստ տալով՝ ետ փախան ամօթով: Այդ ճակատամարտին ճանակցող քաջամարտիկներէն մին եղած էր և՛ Գէվոն:

1894 օգոստոս 3-ին ապստամբութեան ճամանակ՝ Անտաքայ լեռան և Մէրիէրսո՛մ հովտի կռուներուն մէջ՝ զիւցաղ-նական կռու ճողը ընկերներն էին՝ Գէվօ, Ագամ և Կրպօ: Անի ճը հայ ժողովրդին հետ միասին՝ ասոնք էին թըշնամուն տեղատարափ զնդակներուն զէ՛ծ, որպէս թու՛մք, կանգնողները, հաղարարը զօրքերուն և համխոխէներուն զրոհ տուողները, ուղղամթերքի խնայողութեան համար սարերու վրայէն քարեր գլորելով՝ թշնամուն բանակէն բազմաթիւ զոհեր խլողները:

Կռուը յառաջ կը ճղուէր անօթի, ճարաւ և անքուն մնացած: Այդ անհաւասար կռուին մէջ՝ երբ ժողովուրդը, առանց հացի, առանց աղի և առանց ուղղճամթերքի մնաց, պարտաւորուեցաւ երկիրը թողնելով ջրուիլ, փախչիլ: Ահա՛, այդ օրհաստական օրերուն մէջ՝ մենք ալ ընկերներով ապաստանեցանք Յարալը գիւղի ձօտ ապաւածի մը քարայրին մէջ, ուր պաշարուելով՝ երկար ատեն, զիշերցերեկ զիճաղբեցինք: Քարայրը խլտա նեղ լինելուն համար, յարճարութիւն չկար ամէնքս միատեղ կռուելու՝ այդ պատճառաւ, որոշեցինք միայն 2-3 զէնքով զիճաղբել, կռուողներէն մին էր դարձեալ Գէվօն: Տեղի անյարճարութենէն ճարահատեալ ստիպուեցանք անձնատուր ըլլալ:

Բանալը և անոր տաճանելի պայճանները առաջին փորճարարն է ճարդուս իսկութիւնը զուրս հանելու: Շատ քիչեր կը մնան նոյնը, ինչ որ էին զուրսը: Տեսանք որ շատ հսկաներ տկարացան և կամքեր թուլացան աներևակայելի չարչարանաց առաջ, բայց Գէվօն այդ տեղն իսկ մնաց անըրդուելի, և ո՛չ մի կերպով չընկճուեցաւ յաճառ թշնամուն առաջ: Մեղի հետ միասին 15 հոգի փախստական Սասունցիներ ալ բռնուած էին: Ձերբախաւածներուս թիւը 22-ի կը հասնէր: Մէկ տարին չը լրացած 11 հոգի մեռան, թէ ինչպէ՞ս — այժմ խօսքս այդ ճապին չէ:

Բանտի չորս պատերը աւելի կը ճնշէին Գէվօի ազատ հոգին և նա օրէ օր առիթ կորսնէր զինքը կաշկանդող շղթան խղել: Օր ճը Ադամը երկտող մը հասուց ինձի, որուն մէջ զրած էր Գէվօի գրածը՝ «Տէր, ուղղե՛ս զինացս մեր ի ճանապարհս խաղաղութեան . . .»: Այդ կարճ խօսքը շատ որոշ էր, կասկած չկար որ Գէվօն կուզէր «Քըլթիլ» (փախչիլ) բայց անյարճար էր: Նա խաղոյն և եթ համոզուեցաւ, որ յօգուտ ընկերներուն, պէտք էր համբերել և սպասել, աւելի յարճար ըսպէին՝ ամէնքս միասին զուրս գալու համար: Բայց յետոյ՝ գործերը այնպէս բերին որ միայն երեք ընկերներ, որոց հետ և Գէվօն, Մշոյ բանտի (գօրանոցի) պատը ճակելով փախան, 1896 ճարտ 27-ի զիշերը, սաստիկ ճիւնախառն անձրևոտ օր ճը, կռուելով բնութեան սաստիկութեանը դէ՛մ:

Փախչող չորսերէնն ի դատ՝ զօրանոցին մէջ մնացինք երեք ընկերներս Աղամբ, Կրպօն և ես: Առաջին երկուսը ներուժով արձակուեցան Հսկողութեան տակ, իսկ զիս արտուրեցին Թրապլուսը Ղարաբ:

Փախչելէն երկու օր առաջ, Գեվօն դրած էր, "Մնաք բարով սիրելի ընկերներ, ես թէև կը մեկնիմ առանց ձեզի, բայց կը հաւատամ որ ձեր հոգին միշտ իմ հետ կլինի, և վտահ էլ էք, որ ձեր յիշատակը յաւետ մտքին մէջ պիտի պահեմ: Յմահ պիտի աշխատիմ թշուառ, խեղճ ու մարտիրոս ժողովրդին և անոր ազատութեանը համար . . .":

Այդպիսով մենք իրարմէ բաժանուեցանք միանգամայն երկար տարիներ, ես բանտի կապանքներու տակ, իսկ նա նախանձելին գոհ և ուրախ սրտով իր բարձր ու նուիրական պարտականութեանը վրայ:

Բաւական ժամանակ իրարմէ ո՛չ մի տեղեկութիւն չունեցանք, այնպէս որ չէի գիտեր թէ դուրսը ինչ կանցնի կը դաւանայ, յետոյ իմացայ որ մեր Գեվ.Սն իր նորանոր քաջազոր-ձուկներէն զարձած էր Գե.ՈՐԲ ՉԱՎ.ՈՒՆ, որը նահաւակուեցաւ, ոչ ինչպէս Չավուշ, այլ որպէս Հեթոն:

Նա իւր ուխտին և ստանձնած Ս. Գործին հաւատարիմ զինուորը մնաց, մինչև վերջը, կտակելով մեզի Գործի շարունակութիւնը:

Համբոյցներ նահատակ ընկերոջ հոգևորտին և խորին յարգանքներ անոր յախտենական յիշատակին:

ՄՈՒՐԱՍ

### ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր աչքի առաջ կը պարզուի 10-12 քառակուսի քիւթով ընկարձակ ու բերրի դաշտ մը՝ շրջապատուած բաւական բարձր ու արօտալից հողաբլուրներով: Դաշտը՝ ծայրեան օրերին և առհասարակ ամբողջ ամրան ու աշնան երանակներին, բնութենէն վարձատրուած մի հիւանալի տեսարան կը պատկերացնէ, երկրաչափական դանդաղ մեկերով կտրուած: Մերթ կը ժողտի՝ ցուցադրելով ամբողջ հրապոյրը արգասաբեր իւր ծոցին, — աւուրյունների ու կորնկանների երկնեանդ ծաղիկներ, նորածիլ կամ արդէն իսկ հատունցած հացաբոյսերի միապարզ կանանչներ, որոնք կը կէտիկտուին նոր ակտուած սև հողաշերտերով: Զորին հիւսիսային արեւեան բլուրին կանակ տուած է երջանիկ ԱԼԻԻՐ գիւղը՝ 300 տուն բնակիչներով, նոյնքան առատաձեռն բնաւորութիւնով որքան բարեբեր ու ճրգառաւ այգեստաններով ու դինի տուղ խաղողի թուփերով: Ո՛րքան հետաքրքրաշարժ է գիւղը իր հողաշէն տներովը՝ որոնց մեծ մասի տանիքները առաջին ակնարկով չէ կարելի ճոկել բլուրի զառիվայրից:

Դեռ տանն տարի առաջ բլուրների վրայ իբր մեղեդի բնութեան ձօնուած կը հնչուէին հովուին սրնգը, ոչխարին բառաջը, գառնուկին ու ուլին մայրիւնը: Հայ երկրագործին լծկանները խրախուսող եէլի պօ՛ պօ՛ ու սլր-տակէլ երգը, մերթ խրոխտ շէշտերով ու մերթ մեղմահնչիւն կլկոյցներով կարձագանքէր դաշտը: Նախորդին ի նախիր, պէրտորն (ոչխար կիթոլ հարս) ի պէր կը վագեր, մէկ խօսքով երջանիկ կեանքը կը ծարմանար իր բոլոր օրհնութիւններով: Աշխատասէր ու ճարպիկ Ալիբեյին, Կ. Պօլիս կը պանդխտէր և իբր ընդունակ աշխատատէր իր ստացած առատ զրամներով աւելի զարկ կուտար իւր գիւղի ուրախ կեանքին:

Այլ օրերին բնատուր հիւրասիրութիւնը անբաժին չէր թողար ամէն անցորդին, սր կը սիրէր այցելել Ալիբեյ: Նա կըսէր՝ "Եկանք Ալիբեյ էլ երթանք յիւր":

Այսպէս էր Ալիբեյ և այսպէս էին բոլոր հաշտեանի գիւղեր առնն ճր՝ երբ օսմանցին դեռ իրենք չէր ըրած միջնադարեան նախաճիրային քաղաքականութիւնը, իսկ ս՛ յո՞մ, — այժմ ինչե՛ր անցան մեր գլխէն, ի՛նչ անպեր որոտացին մեր երկ-

նակամարին վրայ ու շանթեր թափեցին մեր գլխին ու տակաւին ինչե՛ր կան պահուած մեզ համար:

Մտն Ե ամիս կլինի ինչ տեղա հասած է նոր կուսակալ Ալի պէյ, Ելլարդի տիրահոհակ ուսուցչի հաւատարիմ սանը: Կը հաւատան թէ Կ. Պօլսոյ մէջ երկար առնն լրտեսական ընկ-զլիտուր վարիչներէն մին եղած և շատ ծառայութիւններ ձառուցած է, շատ զապտնիքներ երևան հանած է նորին Կայս. Մեծութեան: Հակառակ կլինայի խտուրթեան ա՛յնչափ շուտափոյթ վան հասնիլը անակնկալ մ՛եղաւ բոլոր վանեցի-րուս և որը սակայն արժանացուց զինք կայսերական գնահատման և տեղա հասնելէն երեք օր վերջ պատուանշան մը ստացաւ:

Ինչպէս ըսինք լրտեսութիւնը իր բնորոշիչ յատկութիւններէն մին է. հոս կը յիշեմ իր ճամբորդութեան մէկ միջադէպը: Ատելչիվաղէն (Վանայ լճի հիւս. արևմտեան գաւառ) մեկնելով նորին բէյութիւնը կրող նուակը կը հասնի Երբրին գիւղը (Վանէն 5-6 ժամ հեռու). գիւղացիները, որոնք ամբողջովին հայ են, կը փութան մեծաբերու, և Ալիի հրամանին համաձայն՝ զինք պատգարակի մը վրայ դնելով՝ ճամբուց կե-նին դէպի տեղա, ընկերակցող ստիկանները դոյքերուն հետ թողելով, քանի որ տեղէս դիմաւորութեան երթադրները շուտով պիտի հասնէին: Ամայի ճամբաներէ անցած առնն՝ Ալի պէյը սիրալի և զարմացմամբ հարց կուտայ գիւղացի-ներուն, — ի՛նչպէս կը լինի որ առանց հրացանի կը ճամբորդէք, կարող է զայլ կամ մի այլ գազան պատահել և մեզ վտանգել: Գիւղացիները նրան ի պատասխան խնարհաբար կը յայտնեն, — էֆէնդի մենք խեղճ ու կրակ, հացակարօտ երկրագործներ ենք, մեզ ո՛րտեղից հրացան, մենք չգիտենք զորձածել էլ. գայլերի դէմ մահակներով կը կուտենք: — Օ՛, կարող էք. բայց (օ՛ օրմատր) այլ չեղաւ, կը կրինէ (չեմ խաբուիր շէշտով մը), պէտք է հրացան ունենաք զուակ-ներս:

Տեղա հասնելուն պէս՝ երբ պաշտօնատունն մտաւ՝ պատին վրայի քարտէղը մատնանիշելով հարցուց. "Մա՛ է Սատտէթ-տին փաշայի պատրաստած վանայ քարտէղը", աւելցնելով թէ Սատտէթտինի հետ երկար առնն տեսակցած և երկրի մասին տեղեկութիւններ ստացած է:

Վան հասնելով իւր պաշտօնական տեսակցութիւններէ յետոյ, ամբողջ ուշն ու միտքը դարձուց պ ա գ ա յ ա տուրքերը գանձելու, չը նայելով որ վանայ քրօնիկ համաճարակ-սովը արդէն սկսած էր իւր աւերները գործել:

Գործադրուած միջնադարեան բարբարոսութիւնների մասին որոշ զարգիւր մը կազմել տայու համար՝ ես կը թողում ընդհանուր տեսութիւնը, կը վերցնեմ իբր օրինակ մի գիւղ և կը պատմեմ եղբայրութիւններ իրենց խիստիպ ձևերով:

Ալիբեյ գիւղը որ կրցանք համառօտակի նկարագրութեամբ մը մանօթացնել, այժմ ձօտ 250 տուն բնակիչ ունի միայն: Փետր. 15-ին կուսակալի հրամանով գիւղերը ցրուեցան ստիկաններ՝ թահսիրտարների հետ հաւաքելու համար բոլոր պարալա տուրքեր, սկսած թիւրքիոյ 1300 թուականից (այժմ 1323). վանդի անկէ առաջ եղածները անհետադրմամբար շնորհուած էին: Իւրաքանչիւր գիւղը նայած իր բնակչու-թեան թւոյն ունէր 7,000—70,000 զըշ. աւելի կամ նուազ տուրքեր, որ պէտք էր գանձել, պետական պարալ գանձը լեցնելու, իսկ ըստ Ալի փաշայի, երկրին բարեկարգութեան ու ապահովութեան նպատակու համար. թահսիրտարներուն արտօնուած էր ստեղծել միջոցներ և գործադրել:

Փետր, 29-ին Ալիբեյ գիւղ կը մտնեն 15 ստիկան աւաջնորդութեամբ թահսիրտարի մը և կը պահանջեն 170,000 զըշ. պագրէէ. գիւղացիները կը խնդրեն որ քանի մը օրուան միջոց տան իրենց հաշիւները տեսնարու համար, սակայն կը մերժուին հայհոյանքների տարափի տակ: Գարահատ գիւղացիք առհաշիւ կը վճարեն 10,000 զըշ. և ճամբուց կը դնեն առաջին հրտակախուժը: Ութ օր վերջ գիւղը կը լեցնուին աւելի թուով ստիկաններ յայտնի ջարագործ Կոլճիւպաշի օղլու Մէճիտի և արխուկալի Չամալ չաուշի առաջ-նորդութեամբ, գիւղացիք կը փութան աւաջնորդել թահսիրտարներին իրենց յատկացուած սենեակը: Գիւղը մեռելա-տունի կը փոխուի գրեթէ անմիջապէս: Մէճիտը կանչել կուտայ գիւղին ռէս (գիւղացեա) Չեմինիկեան Արմենակը, որ ըստ աւանդական սովորութեան գաւազան մը ձեռին հան կը

ներկայանայ. հազիւ թէ ներս կը ճանէ՝ Մէճիար անպատկառ աստեթիւններով կը հարցունէ թէ, ո՞վ տուաւ քեզ այդ դաւազանը: Իրւոյցին կը պատասխանէ.— Կը, քեաֆիր, ֆէրայիներու որոշուածով ուս կը լինի, իմ ներկայութեանս կը ջանաս խաբել, շուտ, այս սենեակը ճեղի չի բաւականանար, պատրաստել տուր առելի կանոնաւորը, նորից քրքել ու լեցնել տուր ճեղ համար անկողիններ ու վերձակներ: Մեր ձիաներին սեղ, ծառայ, պարի, թարմ ու ճաքուր ցորեն, հաց, մորթի՛ր ճեղ համար գառներ, հաւեր: Բէ՛ր իւր, կարագ, հաւկիթ, թէյ ու շաքար, սամաւար, ճաքուր գաւաթներ . . .

— Աղա, քեզ դուրպան, դիտես թէ ճեղք տեղ չունինք ստիկ լաւ, եաթաղ չունինք, կողպատուած ու անօթի ենք. . . Իօսքը կիսատ կը մնայ խեղճին բերնին ճեղ: Կերջին յայտնութիւնը գրգռած էր անբարոյակամի աղբային՝ արժանապատուութիւնը, ակնարկով ճը նշան կուտայ և կուսինեւրի ու գօն դաքնեքի չարուածներին տակ սանդուղէն վար կը գլորեն ուսը, դր քանի ճը դողողացող գիւղացիներ տուն կը փոխադրեն զգայալիկ եղած: Դուրս կուգայ Մէճիար դիւղի ճեղ պտտելու և սենեակ գտնելու համար, դիտածաք կորոշէ սենեակ ճը, ուր երթալու համար պէտք է մանկ ընդարձակ ճիւղարկ շէնք ճը, որ կը կոչուի թոնիրի տուն, ուր կը ծրարուին նահապետական կեանքով հարսն ու փեսան, աղջիկ ու մանչ, ճիճն ու պլօր՝ խառնուելով գառին և ուլին:

Տան տէրը, շատ կը խնդրէ. աղա քեզ դուրպան, սիր աչիպի (ածօթ), ճեր ճճեր խարս ու աղջիկ էն տեղ են, զիշերու ցերեկ կերթան ու կը դառնան ստիկամներ, ի սէր Աստուծոյ ընարիբ ճի ուրիշ սենեակ — Դէ՛ կորսուիք, քեաֆիր, արդէն ես եկել եմ հոս, մինչև որ 20 կին ու աղջիկ չը պղծեմ ու 20 էլ տըղամարդ չսպաննեմ՝ չեմ դուրս գայ, դինսիդ քեաֆիր էր՝ ուր է ճեր հրայանները, ո՞ր դոնսն են ֆէրայիները, դո՛ւրս հանեցէք կուսինք է՛: Ո՞ր կատաղութեան բոլոր թափով կը հայհոյէ: Տնեցոյ լայ ու խնդրանքին անուշաղիր՝ սենեակին դուռը կորսոյցով ներս կը խուժեն և, ի պատիժ, արտուից դուրս հանել կուտայ տանտիրոջ բոլոր անասունները, իրենց ձիերը տեղափոխելու համար, և փայտերի հարուածներու տակ ձեռքերնէն կը յափշտակեն դարձանատան բանալին—գնացէք ճեղ համար տեղ ճարէք և գիւղից ուտելիք հաւաքեցէք ճեր անասուններուն՝ ըսելով:

Յաջորդ առաւօտ վաղ դուրս կուգայ Մէճիար և ուղղակի դէպի եկեղեցոյ հրապարակը կերթայ, ուր կը հաւաքուին գիւղացիներ՝ փակել կուտայ եկեղեցոյ դուռը (փակ մուտք մինչև Զատիկ) և գիւղը դանուած գիւղացիներուն (ճեղ ճար գիշերանց փախած էին) կը յայտարարէ թէ մինչև չը վճարեն 50,000 դրշ. ի հաշիւ պագրեթի՝ դուրս չը պիտի գայ գիւղէն, սպառանալով որ հակառակ պարագային արտօնութիւն ունի ծախելու գիւղացիներու բոլոր անասունները՝ այգի, ծառեր, տան ճածք, անկողին, վերձակ, պտուկ և նոյն խիկ զգեստեղէններ. ճարահատ գիւղացիք կը պատասխանեն— ճեր հոգին Աստուծն, ճեր ունեցածը թագաւորինն է, ինչպէս կուգեն՝ այնպէս արա՛, ամիս ճը յետոյ անօթութենէ ճեռնելու փոխան, այսօր ճեռցուր՝ ապատուինք: Մէճիարի կատաղութիւնը իւր բարձրագոյն աստիճանին կը հասնի, կը հրամայէ անխնայ ճեռել մահակներով — «Քաֆիրներ, ճեր ունեցածը ճերն է արդէն, գիւղն ալ ճերն է, ես բնաւ էլ գիւղը չեմ աւրի, կամ պէտք է տաք դրածը և կամ գնացէք ստուկեցէք, ճեր փոխարէն գիւղ նստողներ պատրաստ են»: Երեկոյեան գիւղացիներին ճեռ մասը կը թողուն գիւղը, ոճանք ընտանիքով՝ ոճանք առանձին մօտակայ թիւրք գիւղացիների և քաղաքացի ճանութիւնի տներ ապատանարան կիսուելու:

Մէճիար եղելութեանց տեղեկանալուն պէս՝ դանել կուտայ մնացածները և ոճանց կախելով, ոճանց մահակներու հարուածներու տակ կը պարտաւորեցնէ որ խոտովանին թէ ո՞ր գիւղերը ապատանած են փախչողները, սպառնալով թէ հակառակ պարագային առևանգուելը պիտի արտօնէ փախչողներու ընտանեաց. ապա մաս առ մաս ոչխարներ, կովեր ու գոմէշներ կուղարկէ՝ քաղաք ճախելու, իւր պատրաստած երկու խահանջներուն պէտք եղածը վերցնելէ յետոյ: Ո՞րքան յուզումնալից էր տեսարանը, երբ քաղաքին դռնէն կանցունէին թ ա լ ա ն ը. 10-12 տարեկան ճի քանի երեխաներ մինչև

հոն ետեւէն ինկած կուլային՝ երբ ոչխարներէն ճի քանիսը վիժեցին գառնուկներ և անոնց աղիւղորմ բառաջը խառնըուեցաւ լալիւններուն նոր թափ ճը տալով:

Իրւոյցն ուսը և ճի քանիսը քաղաք գալով՝ խնդրագիր մատուցին, յայտնելով գործուած չարիքները. քիչ ճը ժամանակ անցնելէ յետոյ կուտակալը իր ներկայութեան կանչելով գիւղացիներ, կանարգէ, կը թքնէ, կը հայհոյէ, — այդ ամէնքը ե՛ս եմ պատուիրած՝ ֆէրայիներով լեցուն ճեր գիւղին համար ոչ ճի խնդրանք չեմ ընդունիր, ճախեցէք ճեր հրայանները և վճարեցէք, քեաֆիրներ, տակաւին տաք ստիկան էլ կը դրկեմ՝. և կը հրամայէ իւր թիկնապահին ստիկանէլ չկայ: Նոր ճողկած հարիւրաւոր ճառեր գետին կը թաւաւին, աւերու՛մ լա՛ց ու կո՛ծ, — ահա՛ այս է բաժին թշուառ սովատանջ գիւղացիին, և այս է քաղաքացիին ալ վիճակը, որու գործիքները կը խլուին արհեստանոցէն, հացն, ալիւր, անկողին, և այլն, տունէն:

Թող ստիկայ դժուրք և թող խորհուրդի կանչէ իւր բոլոր պաշտօնեաներ, զի ճեր երկիրը դժուրէն աւելի անասնելի ու ճեր կառավարիչը և իր պաշտօնեաները բեհեղղեբուղէն աւելի ճարտար են:

ԱՅՊԵՐԱՆՑ ԱՐԻԻՆ

29 Մայիս (հ. տ.) 1907  
Վ Ա Ն

**ՆԱՄԱԿ ՏՐԱՊԵՂՈՆԻՑ**

Տեղուս նորընտիր կուտակալը Թահիր փաշան երեք շաբաթ առաջ ուրբաթ օրը իւր ֆերձանը կարդալով՝ կառք նստաւ և տեղէս ճեկնեցաւ Պիթլիղ երթալու համար, կըսուի թէ հազիւ երկու ամիսէն պիտի վերադառնայ:

Զինուորական հրամանատար Համոյի փաշայի սպաննիչ Մելաղիմ Նաճի էֆէնդին այս գիշեր (28-27 յունիս) ժածը 7-ին կախեցին: Մինչև այժմ փոլիսի ճեղ կը գտնուէր, ճիւղն ընտանիքի անդամներուն հետ ճի քանի անգամ խօսելու հրաման տրուած էր:

ԱՆՑՈՐԴ

Յուլիս 12, 1907, ՏՐԱՊԵՂՈՆ

**ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՉԻՑ**

**ՔԻՕՍԷ ՍԱՐԳԻՍ**

(ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ)

Ներկայ 1907 թ. յունիս 1-ին անողոք զնդակին զոհ գնաց Թիֆլիզում, Արշակերտի Համառ գիւղացի Սարգիս Տեր-Կարապետեան Յակոբեանը, ճոտ 25-27 տարեկան ճի քաջարի երիտասարդ, ամենախոր վիշտ պատճառելով Թիֆլիզի ամբողջ հայ հասարակութեան սրտին. ո՞վ էր այդ երիտասարդը: Քէօսէ Սարգիս (այդ անունով էր նա յայտնի ամբողջ Անդրկովկասին) կենսագրութիւնը գրել չէ միտք, որովհետև դա ճի լուրջ և խիստ կարևոր գործ է, որ պէտք է կատարելի հանդուցեալին աւելի մօտից ճանօթ և ճեռնհաս ընկերների միջոցաւ. կիտրճեմ հաղորդել ընթերցողներին այն միայն ինչոր վերաբերու՛մ է նրա վերջին օրերին և թաղմանը, որին ակամառես եմ եղել:

Նրա անցեալից այսքանն է ինձ յայտնի, որ Քէօսէ Սարգիսը դեռ պատանեկան հասակից իր ամբողջ էութեամբ հա-

ճակուել է յեղափոխական զգափարներով և տաճկահայ տառապետ ժողովրդի ազատագրութեան համար ճղուող սրբազան կուռի ծարաւով: Եւ նա երկար տարիների ընթացքում ժամակցել է Ալաշկերտի գաւառում քրդերի և թիւրքերի դէմ ճղուած մի շարք ճակատամարտերի՝ միշտ խիզախ, միշտ անվեհեր, միշտ հիացմունքի արժանի . . . Ի վերջոյ հալածուելով և սաստիկ հետապնդուելով թիւրք կառավարութեան կողմէն՝ 1903 թուին անցնում է Կովկաս և Կաղզուանում ծանում է Հնչակեան շարքերի մէջ, որպէս անձուէր Հնչակեան զինուոր, ուխտելով իր կեանքի գնով պաշտպանելու մեր կուսակցութեան վեհ զրօշը:

Շատ շանցած, սխաւում են կովկասեան հայ-թրքական աւրինահեղ անցքերը և Սարգիսը Կարսի վրայով գալիս է Թիֆլիզ և ապա անցնում է Ղարաբաղ: Այստեղ Սարգսի առաջ բացում է եւուն գործունէութեան լայն ասպարեզ և նա, որպէս պահապան հրեշտակ, հասնում է ամէն տեղ, ուր նկատում է թշնամու հոծ բաղձութիւնը և զնդակի տարափի ներքև անվեհերաբար կուում է, քաջալերում իր զինակիցներին, ազատում նեղն ընկածներին, իր մի շարք քաջագործութիւններով արժանանում անխափ բոլոր հայերի հիացմունքին . . . Հնչակեան, Դաշնակցական, Սօցիալ-Դեմօկրատ — բոլորը միատեսակ և միաբերան Քէօսէ Սարգսի անմուսանալի հերոսութեանց գովքն են անում, նրան սիրում, պաշտում, նրան որպէս օրինակ ժամանացոյց անում իրենց ընկերներին:

Իսկ թշնամին՝ լսելով Քէօսէ Սարգսի անունը ամէնուրեք՝ թողնում էր իր զիրքը և փախուստի դիմում: Կուռի ամենատաք միջոցին, երբ Շուշուայ թրքական ճաւը հայի համար անձառչելի մի դժոխք էր ներկայացնում, էլի Քէօսէ Սարգսին էր, որ խիզախում էր և այնտեղից փրկում էր հազարաւորների բաղձով և կեանքեր, հրի և սրի միջից զուրս բերելով նրանց . . . Եւ Քէօսէ Սարգսին իրաւամբ կրում է ՇՈՒԻՇՈՒԱՅ ՊԱՇՏՊԱՆ գլխի տիրոջ: Քանի Շուշին գոյութիւն կունենայ՝ այնտեղ ճարդիկ, հայ, թուրք և այլ-ազգեր միշտ պատկառանքով կլիշէն Քէօսէ Սարգսի պաշտելի յիշատակը:\*)

Նրա բարձր և վայելուչ հասակի, միշտ ժպտուն դէմքի, ճաքուր և անկաշառ սրտի, միշտ ճշմարտախօս լեզուի և վերին աստիճանի հաստատ ու աննկուն կամքի առաջ ինքնաբերաբար կիսմարհուէր իւրաքանչիւր հայրենակից, բայց նա հեղ էր՝ ինչպէս գառնուկ և վեհանձն՝ որպէս աւելւած, ու ամէնքի հետ սիրալիր էր, ամէնքի հետ քաղցր և ընկերական . . . Այն աստիճանի համեստութիւն կար այդ հրակայ հերոսի մէջ, որ նրա հետ ամիսներով էլ եթէ միատեղ ապրէիք, իրեն սքանչելի մեծութեան ճափն մի բառ անգամ չէիք լսիլ նրա բերանից:

Նրա լայնածաւալ հուշակը լսողները երբ իրեն տեսնում ու որևէ կերպով իրենց սքանչացումն էին արտայայտում, նա սովորաբար ժպտալ դէմքին պատասխանում էր.

— Մայրս զիս ծնաւ և Հնչակեան Կուսակցութիւնը ինձ հոգի տուեց՝ ազգիս ճառագելու համար:

Եւ դրանով վերջացնում էր իր խօսքը, միշտ խուսափելով զովաբանական ակնարկներից:

Մահից երկու օր առաջ խօսք կար մի շատ լուրջ ձեռնարկի ճափն և հանգուցեալը լիովին պատրաստակաւ մտքիւն էր յայտնում իր փառքը պատկերու նորանոր անձնաւորութիւններով. նկատելի էր թէ ինչպէս այդ երիտա-

(\* Մասնաւոր մի նամակից քաղում ենք հետևեալը. «Երեւակայեցե՛ք, մի շատ զարմանալի և իր տեսակի մէջ հազարապիս երևոյթ. — Շուշում երբ լսել են Սարգսի սպանւելը, նրա պատկերը զուրս են բերել թափօրի սև շղարքը վրան և այդ թափօրին հետևել են հայերը անխափ, թուրքերից էլ բաղձով խմբեր միացել են այդ տխուր հանդէսին»:

սարդը յոգնելու ճափն գաղափար իսկ չունէր, կարծես նրա ջղերը պողպատից լինէին: Ի՞նչպէս ճոռանալ, ճանաւանդ, այն բոլակն, երբ խորհրդակցութիւնը վերջացած՝ նա տեղից վեր կացաւ, և հաստատուն ու վճռական եղանակով պատասխանեց.

«Ընկերներ, վիրաւորանք կըլլար մեզի համար, եթէ դէպի ճաճկա-Հայաստանն ունեցած մեր պարտականութեան ճափն այստեղ խօսք բացուէր . . . Եթէ բոլոր առանց ջրի կեանք չունի, ապա մեր քաճաղղ Հայրենիքն ալ առանց մեր աւրինին ազատ կեանք ունենալ չի կարող . . . Ու քանի դեռ մեր երակներուն մէջ արին կհոսէ, մենք չենք կարող խնայել այդ արինը Հայրենիքի համար . . . ԵՍ ՊԱՏՐԱՍ ԵՄ»:

Այդ սրաբաւովս բառերը արտասանելուց յետոյ՝ լուիկ միջիկ դուրս գնաց նա:

Հարցը վճռուած էր: Քէօսէ Սարգիսը «ՊԱՏՐԱՍ» էր յօճարակամ դոհ բերելու իր ճաղիկ կեանքը այն Հայրենիքին, որին այնպէ՛ս ջերմ սիրով սիրում էր նա, այն ժողովրդին, որի պարտաճանաչ գաւաին էր հանդիսացել նա իր ամբողջ էութեամբ:

Բայց անդիտակից արինակցի ճահուլիթ գնդակը նրա փութուրը խեղդեց սրբազան հասրաթը:

Հազիւ 24 ժամ ապրեցաւ նա վիրաւորուելուց յետոյ և այդ 24 ժամուան ընթացքում, հոգևարքի ճգնաժամումն իսկ նրա անզուսպ հոգին սլանումէր դէպի «Քաճաղղ Հայրենիք» արիւնդող դաշտերն ու լեռները, այնտեղ, ուր նրան էին սպասում գոյութեան իրաւունքից զրկուած թշուառները . . .

— Է՛հ, շշնչում էր նա զողորմուն ճայնով, ճահուլիթ սաղաթակի մէջ, — գոնէ այն տեղ մեռն էի . . . Դուք ինձմէն աւելի երջանիկ էք, որ պիտի կարողանաք այդ փառքին հասնել, Հայրենիքի մէջ Հայրենիքի համար մեռնիլ . . .

Այդ ճողորմներով աւանդեց հոգին Յունիսի 2-ին, ցութեկուան 12 ժամին:

Քէօսէ Սարգսի ճահուլիթ փութուրը կայծակի արագութեամբ տարածուեց Կովկասի ճայրաքաղաքում. անպատմելի ուժգնութեամբ շանթահարելով բոլոր լսողների սրտերը:

Կովկասի և Ռուսաստանի Հնչ. Մասնաճիւղերի Գործադիր Յանձնախումբը բաց թողեց հետևեալ ճահագոյշը առանձին թուղթիկով տպուած.

«Ընկերներ, Հոգեկան ամենախոր կակիծով է, որ կղուժեք մեր անուղբական հերոս, Շուշուայ պաշտպան ՔէՅՍԷ ՍԱՐԳՍԻ Եւ դեռնական մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 2-ին:

Հրաւիրում են բոլոր ընկերները և հանգուցեալի յիշատակը յարգողները՝ ներկայ լինելու, երեքշաբթի, առաւօտեան 9 ժամին, ճարմիկ տեղափոխութեանը Միքայէեան հիւանդանոցից դէպի Վանքի Մայր Եկեղեցին, իսկ պատրազից յետոյ յուղարկուարութեանը՝ դէպի Խօջիվանքի գերեզմանատուն»:

Երեքշաբթի, յունիսի 5-ին, առաւօտեան ժողովրդի խուուն բաղձութիւն էր հաւաքուել Միքայէեան հիւանդանոցի ճօտ, որտեղից անպարտ գոհի ճարմիքը շքեղ հանդէտով փոխադրուեց Վանքի եկեղեցին: Ճանապարհին երգում էր երգեցիկ խումբը: Դիակաւքը և զագողը ճածկուած էր բաղձութիւ պատկերով և ճողկեփնջերով: Օրիորդները գոց-գոց տանում էին պատկերը, նրանց հետևում էին պատկակիր ընկերները, Հնչակեան վարիչ ճարմիները, ժողովուրդը և հանգուցեալի հայրենակիցները: Պաշտելի հերոսին բերել էին հետևեալ պատկերը. — Կովկասի և Ռուսաստանի Հնչ. Գործադիր Յանձնախումբից, Երևանի, Շուշուայ, Արմաւիրի, Բագուայ, Թիֆլիզի, Չանգեղուրի, Սևաստօպօլի, Գանձակի, Նովորոսիսկի, Բաթումի, Փօթիի, Խարսի, Օդեսայի ճանաճիւղերի ընկերներից, Դաշնակցականներից, Դաշնակց. Մասնոյ ընկերներից, Դուրաք խմբից, «Մայր-Հայաստան» Հնչ. խմբից՝ 11, «Ասող» Հնչ. խմբից, «Հեռաւոր», «Մասուն», «Առիւծ» Հնչ. խմբից 3-ական, «Վրէժ» Հնչ. խմբից, «Այճեաճ» Հնչ. խմբից 3, «Ազատաճ», «Բազրատունի» «Աւետիք», «Արամ», «Լօղի», «Մուրաճ Գ.», «ճարսն», «Հաւրազան», «Եփրատ», «Արաքս Բ.» Օրիորդաց Փունջ», և «Տուկար» Հնչ. խմբից. Ռ. և Կ. Հնչ. Գործադիր Յանձնախումբից առանձին ճողկեփունջ, «Լօղի» խմբից առանձին շքեղ ճողկեփունջ, և այլն, և այլն:

Եկեղեցում դաճբանական խօսեց Ա.ը, որից յետոյ բաղձամարդ թափորը վանքի գաւթում լուսանկարուեց և ապա

սխառեց տխուր յուզարկաւորութիւնը:

Կառավարութիւնը տեսնելով յուզարկաւորների հոծ բազմութիւնը, կարգադրել էր ձի խումբ սպառազինուած հեծեալ կողակների հետևել սպախաբխին:

Ճանապարհին, ի պատիւ և ի յարգանս ամենից պաշտուած հերոսի յիշատակին, արհեստագործները զուրա էին գալիս իրենց համբարական դրօշակներով՝ սևով, քողարկած, բոլոր ճագաղիները և խանութները խախտ փակուած էին և աւելի ու աւելի ստուարանուծ էր յուզարկաւորների բազմութիւնը . . .

Ամէնի դէմքի վրայ նկարուած էր սրտատու որ տիրութիւն և այդ ծովացած հասարակութիւնը, կարծես բոլոր հոգւով ճմրւած ճակատագրական հարուածի ծանրութեան ներքեւ, կանդաղաբայլ դիմուծ էր դէպի Խոջեվանքի գերեզմանատուն:

Վերջապէս թափոյն հասաւ Խոջեվանք, որտեղ և ամփոփուեց հերոսի աճիւնը:

Գերեզմանի վրայ զգածուած և լացակամած եղանակով ու փղձկուն սրտից բղխած դամբանականներ արտասանուեցին հայերէն և վրացերէն լեզուներով, ձի առ ձի թուելով հանգուցեալի արժանիքն ու քաջագործութիւնները և նրա ճակատն առթած խորագոյն կակիճը ամենի սրտին . . .

Փոքրիկ հողաթուճքը շուտով ծածկեց ձեր ճարած տեսութիւնից այն հսկայի նշխարները, որի մէջ դեռ անապառ աւին կար ճաքաւոր բռնութեան և թշնամեաց դէմ . . .

Հանգի՛ստ ոսկրներդ, ժողովրդի հարազատ գաւակ, քսուաբը յիշատակը անջինջ կմնայ ձեր սրտերում և ձեռք կուխտենք իրագործել այն նուիրական տենջանքները, որոնք համակել էին քո անբիճ հոգին:

Քեզ նման հերոսներն անմահ են յախտեան:

Հ. Ա.

1907 Յունիս 7  
ԹԻՖԼԻՉ

**Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն**

Սօցիալիստական կօնգրէսների որոշումները և դրած հարցերը աչքի առաջ ունենալով՝ ներկայ հարցարանը մշակեցինք, որպէսզի ձեր ընկերները ընդհանուր ուղեցոյց ունենան այն և ըստ այնմ ուսումնասիրեն գիւղական հասարակութիւնը և երկրագործական խնդիրները:

Այդ ուղեցոյցով է որ ձեր ընկերները պիտի առաջնորդուեն թէ՛ Կուսակցական Մամուլին և թէ՛ Գործադիր Յանձնախմբերին տուած տեղեկագրերի համար:

Դրած հարցերին պիտի աշխատեն ճշգրտութեամբ պատասխանել թէ՛ Կովկասի, թէ՛ Ճաճկա-Հայաստանի և թէ՛ Պարսկաստանի ընկերները, — ամէն ինչ, յայտնի բան է, տեղական պայմաններին համաձայն:

Մենք դիտմամբ շոշափած ենք շատ հարցեր, որոնք թէև հայ իրականութեան մէջ շատ մեծ ծաւալով դեռ գոյութիւն չունեն, բայց ցոյց են տալիս այն հոսանքը, որ առել են երկրագործական խնդիրները, — ինչոր պրօպագանդայի նիւթ էլ կարող է լինել ընկերներին:

Ուսումնասիրութեան ժամանակ առանձնապէս ուշադրութիւն պիտի դարձնել տեղական շատուկ պայմանների վրան:

Մի ժողովուրդ, մի դասակարգ լաւ ճանաչելու համար՝ պէտք է այն բազմակողմանի կերպով ուսումնասիրութեան ենթարկել և ստացած եղբակցութիւնները մի քանի անգամ վերաստուգել, — այդ պայմանով է, որ ճշմարտութեան և իրականութեան

կարելի է ձօտենալ:

Ոչինչ այնքան մնասախար և սխալեցնող չէ, որքան մի խնդրի նկատմամբ կանխասաց կարծիքներով առաջնորդուիր: Ժամանակակից կեանքը այնքան յարափոփոխ երևութներ է բովանդակում իր մէջ, որ երէկուայ դիտողութիւնը այսօրուան բացարձակ ուղեցոյցը չի կարող լինել, ուստի միշտ բացական է և նոր աչք պէտք է ունենալ:

Մեր մէջ շատ գաղափարներ կան, որ իսկապէս գոյութեան իրաւունք չունին, բայց պահուած են, որովհետև ասելը, կրկնելը մի տեսակ հնաւանդ ունակութիւն (en routine) է դարձել, ինչոր շատուկ է ծոյլ ուղեղներին, — դրանից է որ պիտի խուսափեն օրուան գործի չնեւրը:

Ապագային մենք յաճախ պիտի վերադառնանք երկրագործական խնդիրներին, որովհետև ձեր ժողովրդի ստուար մասը երկրագործ լինելով՝ հարկաւոր է որ պատմականորէն և փաստացի կերպով հասկանայ հողային — սեպհականատիրական խնդիրների բնաւորութիւնը և այդ մասին հրապարակի վրայ եղած կարծիքներն ու վարդապետութիւնները:

Պէտք է գիւղացուն պարզ և որոշ կերպով ցոյց տալ թէ ինչպէս երկրագործութիւնը հետզհետէ սկսում է ճարտարարուեստուիլ (s'industrialiser) և, հետևաբար, քաղաքացի պրոլետարիատի նման, նա էլ իր անտեսական ու քաղաքական արժատական փրկութիւնը պիտի որոնի միայն և միայն սօցիալ-դեմօկրատական սկզբունքների կիրառութեանը մէջ:

\* \* \*

**ՀՈՂԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ա. — Պատմական համառօտ տեղեկութիւններ տուեցէք այն մասին, թէ ձեր շրջանի հողատէր-սեպհականատէրերը ի՞նչ կերպով են ձեռք բերել իրենց անշարժ կաշքերը վարեւահողեր, արօտատեղիներ, անտառներ, այգիներ, և այլն: Ձեր տեղեկութիւնները աւելի ճանրամասնեցէք խոշոր հողատէրութեան նկատմամբ:

Բ. — Ձեր շրջանում ի՞նչքան հողատէրեր կան, որոնք հողային սեպհականութեան տարածութիւնը լինի՝

- 1 դեռեալներից քիչ:
- 1 — 10 դեռեալին: . . .
- 10 — 40 . . .
- 40 — 100 . . .
- 100 — 1,000 . . .
- 1,000 — 10,000 . . . (և այլն. \*)

Խոշոր, Միջին և Փոքր հողատիրութիւնը հողային ի՞նչ տարածութիւններից է կազմուած նկատուած, — այդ մասին աւելի հարց ու փորձ արեք գիւղերում. տուեցէք թիւը այդպիսի հողատէրերի, շրջանի անունը և բնակիչների թիւը:

Գ. — Որքա՞ն էր սեպհականատէր հողատէրերի թիւը, ձեր ուսումնասիրած շրջանի մէջ, սրանից 5, 10 և 20 տարի առաջ: — Այդ մասին կարող էք օգտուել շինական դատարանների, միջնորդ դատարանների, երկրագործական հաստատութիւնների և հողային խնդիրների վերաբերեալ ծառեաններից:

Դ. — Խոշոր, Միջին և Փոքր հողատէր-սեպհականատէրերը ի՞նչքան կալուածատուրք են վճարում, ի՞նչ եղանակով և տարին քանի՞ անգամ:

Ե. — Ձեր շրջանում ի՞նչ ուղղութեամբ է դարգանում հողատիրութիւնը:

- Դէպի շատ խոշորը (10,—20,000 դեռեալներից աւելի)
- » խոշորը (1,000-ից 10000)
- » միջինը (100-ից 1000)
- » փոքրը (10-ից 100)

(\* Ճարածութեան այդ չափերը կարող էք տալ նաև փութի, խալվարի, կօտի, էօլէէկի, սրտավարի և օրավարի հաշուով, նայելով թէ ո՞ր տեղի համար ի՞նչ չափ է գործածուած:

Գէպի շահ փոքրը (մէկ դեհատինից վար)

Չ. — Ի՞նչ արժէ հողը:

Արժէքը աւելանում է թէ պակասում:

Ի՞նչ արժէր ճի դեհատին հողը սրանից 5, 10, 20 տարի առաջ և ի՞նչ արժէ այժմ:

Ե. — Խոշոր կարուածատէրերը իրենք ենք ճշակում իրենց կարուածները թէ՛ վարձու են տալիս: Եթէ իրենք են ճշակում, ապա ի՞նչպիսի և ի՞նչքան գործաւորներ ու պաշտօնեաներ են պահում:

Բ. — Եթէ կարուածատէրերը իրենք չեն ճշակում իրենց հողերը և վարձու են տալիս, — ապա ի՞նչ պայմաններով և ի՞նչ գնով:

Թ. — Ձեր շրջանում կարուածատիրական և վանքապատկան գիւղեր կա՞ն: Փոխադարձ ի՞նչ պայմաններ կան կալուածատէրերի և դիւղայինների միջև: Ծուեցէք համառօտ տեղեկութիւններ:

Ասացէք ճի քանի խօսք հողի բեղմնաւորութեան ծախսի ընդհանրապէս:

**ԱՎԱՐԱԿԱՊԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐԱԲԱՆՆԵՐ**

Ա. — Եթէ ձեր շրջանի մէջ ագարակապաններ (fermier) կան, որ իրենք են շահագործում, ապա քանի՞ դեհատինի է հասնում նրանց շահագործած հողը:

Ի՞նչ պայմաններով:

Գ. — Ձեր շրջանի մէջ կա՞ն ճարաբաններ (métayer): Ի՞նչքան: Ի՞նչ կարագորութիւն ունեն նրանք հողատէրերի հետ, — գրաւոր պայմանագրութիւն կա՞յ, թէ՛ ամէն ինչ բերանացի է կատարում:

Հողերի շահագործման մէջ միայն ճարաբաններն են բերում իրենց տաւարը, գործիքները և սերմացուն, թէ՛ հողատէրն էլ է սերմացուն կէսը տալիս:

Կը պատահի՞ որ ամբողջ սերմացուն հողատէրը սաչ: Հողատէրը ճարաբային տալի՞ս է և՛ բնակարան:

Բերքը ի՞նչպէս է բաժանում,

Մարաբայի և հողատէրերի միջև կայացած պայմանագրութեան մի օրինակ նայնութեամբ կցեցէք ձեր սեղեկագրին, եթէ կայ:

**ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ**

Ա. — Ձեր շրջանում կա՞յ համայնական հողատիրութիւն, համայնական հողատիրութիւնը քայքայւո՞ւմ է. ի՞նչպէս: Կա՞ն անտառներ, արօտատեղիներ, ճշակելի հողեր, ջրաւազաններ, և այլն, որ միմիայն համայնքին պատկանին:

Բ. — Ի՞նչքան է այդ հողերի տարածութիւնը:

Ի՞նչպէս են շահագործում:

Այդ բոլոր ամբողջ համայնքի ազատ արածադրութեան տակն է գտնւո՞ւմ:

Համայնական հողերը ի՞նչպէս են բաժանում բնակիչներին, — լուծքի՞, թէ՛ շունչի համեմատ:

Համայնքին պատկանող հողերը սրւո՞ւմ են ստակական մի անհատի շահագործման համար. — ի՞նչ պայմանով:

Կա՞ն օրինակներ, երբ համայնքը ինքը հողերը շահագործէ և արդիւնքը բաժանէ, — ի՞նչ ձևով:

Հողերը ուղղակի համայնական թէ՛ անհատական բնաւորութիւն ունին:

Համայնական հողերը մեծացնելու միտում կա՞յ:

**ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Ա. — Գիւղերի ազգաբնակչութիւնը աւելանո՞ւմ է. թէ՛ պակասում, — բերեցէք օրինակներ:

Բ. — Ինչի՞ն էք դուք վերագրում այդ նուազումը կամ աւելացումը:

Գ. — Երիտասարդները ընդհանրապէս զի՞ւզն են մնում, թէ՛ քաղաքները պանդխտում:

Դ. — Տնով-տեղով գաղթողներ կա՞ն. տուեցէք գաղթականութեան և պանդխտութեան պատճառները:

Ձիւղերի և ճարագործների արձակուած երիտասարդները աւելի նախընտրում են զի՞ւզը մնալ, թէ՛ քաղաքները երթալ:

Ե. — Ձեր շրջանից ուրիշ տեղեր աշխատանքի համար պանդխտողներ թիւր ո՞րքանի է հասնում:

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ա. — Ձեր շրջանում երկրագործական ի՞նչ արտադրութիւններ կան, — խաղող, ցորեն, գարի, կորեկ, գլղը, խոտ,

ձակնդէղ, գետնախնձոր, կաթ, կարագ, պանիր, չար մրգեղեններ, ձի, էղ, կով, դոճէշ, ոչխար, խոզ, հնդկահաւ, սագ, բաճիկ, հաւ, աղանիս, ձու, ծաղիկ, ծառեր, փայտ, ձիթենի, թթենի, բաճախ, դարի, բուրբուր, բանջարեղէն... անուանեցէք ճանրածանսորէն:

Տեղեկագրեցէք թէ ի՞նչ բերքեր և արտադրութիւններ յատուկ են միայն ձեր շրջանին:

Ո՞րքան է ստանում շատ փոքր, փոքր, միջին, մեծ և շատ մեծ հողատիրութիւնը այդ արտադրութիւններից:

Դրանց շահագործումը ի՞նչքան արժէ տէրերի համար:

Արտադրութեան տեսակի մէջ ձևափոխութիւն կա՞յ (օրինակ՝ հացահատիկներ փոխանակ մարգարտնի, այգիներ փոխանակ հացաբոստերի, թթատաններ փոխանակ խոտանցի, և այլն):

Բ. — Մշակութեան համար ի՞նչ կենդանիներ են գործածւում. թուով ո՞րքան: —

Կա՞ն աշխատաւորներ. ի՞նչքան:

Ի՞նչ է աշխատանքի պայմանները:

Գ. — Թուեցէք թէ հողի մշակութեան տեսակէտով ի՞նչ բարեկարգութիւն կայ յառաջացած ձեր շրջանում:

Դ. — Ձեր համայնքի կամ շրջանի մէջ կա՞ն տիրող սովորութիւններ, որոնց համաձայն գիւղացիները իրարու փոխադարձ ծառայութիւններ մատուցանեն տարուայ յայտնի ժամանակներում և յայտնի աշխատանքներում. օրինակ՝ «փոխարայ բանել», «միջին», և այլն:

Երկրագործական գործիքներ, կենդանիներ իրարու փոխապաւ սովորութիւններ կա՞ն. — նկարագրեցէք ճանրածանսորէն:

Ե. — Արտադրողները իրենց արտադրոյթը ուղղակի սպաւազի՞ն են վաճառում թէ՛ միջնորդների:

Նկարագրեցէք հանգամանօրէն շրջապատող շուկաների բնաւորութիւնը, ծախելու եղանակը և գինը: (Այստեղ՝ կազմեցէք արտադրութիւնների ճանրածանս տեղեկագիրը, նշանակեցէք վաճառականական և անտեսական տարածապետի ծախսի, ցոյց տուեցէք նրանց բնորոշող դրագապատճառները, գոյութիւն ունեցող մրցակցութեան բնաւորութիւնը, և այլն):

Չ. — Ձեր շրջանի ո՞ր արտադրութիւնը ազգաբնակչութեան պէտքերին լիովին բաւականութիւն է տալիս. ո՞րը ոչ:

Ի՞նչ է արտահանում և ի՞նչ ներմուծում, և ո՞րտեղից: ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. — Շատ փոքր, միջին, մեծ և շատ մեծ հողատէրերը օգտուո՞ւմ են երկրագործական ներկայ մեքենայականութիւնից:

Բ. — Ի՞նչ գործիքներ են գործածւում, — սարդ արօր, գուլթան, մանգո, տափան, մանգո, ջարջաճ, կա՛մն, փոցիս գերանդի...:

Ձեր շրջանում գո՞րծ են ածում երկրագործական նորագոյն մեքենաներ և գործիքներ, — ինչպէս են երկխոփ, բազմախոփ և խորհակիչ արօրներ, կամիտղ մեքենայ, ցանող մեքենայ, արծաններ անկող մեքենայ, պարարտացուցիչ նիւթեր սփռող մեքենայ, հնձող մեքենայ, քամու տուղ (էրան անող) մեքենայ, նորագոյն արմուղ, բաճախի մեքենայ, և այլն:

Գ. — Այդ հողատէրերը գո՞րծ են ածում էլեքտրաշարժիչներ (moteur), պետրոլաշարժիչներ և կամ գաղաշարժիչներ:

Գահավիժող ջրերի սյփից օգտուողներ կա՞ն ձեր շրջանում ինչի՞ համար:

Ձեր շրջանի մէջ կա՞ն օրինակներ, երբ համայնքի բոլոր անդամները միասին, կամ նրա փոքր արտադրող ճարմիայն, իրարու հետ միասնաբար՝ նորագոյն երկրագործական մի կամ մի քանի մեքենաներ գնեն ընդհանրութեան գործածութեան համար: Ի՞նչ տեսակի են այդ մեքենաները:

Դ. — Այդ գործիքներից և մեքենաներից ամէնքը հաւասարապէս կարող են օգտուել, թէ՛ միայն գնելուն ծանակցողները, իսկ գնելուն չծանակցողներին կամ կարողութիւն չունեցողներին վարձու կամ ձրի օգտուելու սրւո՞ւմ է:

Ե. — Ձեր շրջանի բոլոր տեսակի արտերը ջրարբի՞ են, թէ՛ անջրբի: Ուռղման գործը ի՞նչ հիմունքների վրայ է դրւում:

